


Աղբյուր. նկարները արված են Խորհրդատուի կողմից դաշտային այցելությունների ժամանակ

# ՀԱՅԱՍՏԱՆ - ՋՐԱՄԲԱՐՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

## Շրջակա Միջավայրի և Սոցիալական Ազդեցության գնահատում Ջրամբարների Կառուցման Ծրագրի համար

## ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ՊԼԱՆ

**Rev02**

**Նոյեմբեր 2025**

**Մշակված է
Վերակառուցման և Զարգացման
Եվրոպական Բանկի
և
*ՀՀ Տարածքային Կառավարման և
Ենթակառուցվածքների
Նախարարության Ջրային
Կոմիտեի համար***

ATMS Solutions
www.atms.am

# ՋՐԱՄԲԱՐՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ - ՀԱՅԱՍՏԱՆ

## Ջրամբարների կառուցման ծրագրի ՇՄՍԱԳ

# ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ՊԼԱՆ

**Rev02**

**Նոյեմբեր 2025**

**Խորհրդատվական ծառայությունների պայմանագիր № 2023.009567**

**Ում համար է պատրաստված՝**

- **Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկ**
- **ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը կից Ջրային Կոմիտե**

**Ում կողմից է պատրաստված՝**

**Էյ Թի Էմ Էս Սոլյուշնս ՍՊԸ (Հայաստան)**
Տնօրեն: տզթ. Արտակ Տեր-Թորոսյան
ՀՀ ք.  Երևան, Գրիբոյեդովի փող. 11շ, 1
Հեռ.: +37499 109495
E-mail: artak.ter-torosyan@atms.am
www.atms.am

և

**Էկոլայն Ինթերնեշնլ ՍՊԸ (Բուլղարիա)**
Տնօրեն՝ տզթ Մայա Գաչեչիլաձե-Բոժեսկու
Հեռ.: +380 951 100 727
+ 359 876 63 0522
E-mail: mgachechiladze@ecoline-int.org
www.ecoline-int.org

**Փաստաթղթի պատրաստում և տրամադրում՝**

| Տարբերակ | Կարգավիճակ | Պատրաստող | Վերանայող | Տրամադրող | Տրամադրման ամսաթիվը |
|---|---|---|---|---|---|
| Rev01 | Ծրագրի ՇՆՊ-ի 1-ին նախագիծ | Ա. Տեր-Թորոսյան | | | 10.11.2025 |
| Rev02 | Ծրագրի ՇՆՊ-ի 2-րդ նախագիծ | - | Ա. Տեր-Թորոսյան Մ. Գաչեչիլաձե-Բոժեսկու | Ա. Տեր-Թորոսյան | 01.12.2025 |
| | | | | | |
| | | | | | |

© ATMS Solutions Ltd., 2025
Բոլոր իրավունքները պահպանված են

## Պատասխանատվության շրջանակը

Սույն փաստաթուղթը մշակվել է Խորհրդատուի կողմից Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկի (ՎԶԵԲ) և ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության Ջրային Կոմիտեի բացառիկ օգտագործման համար՝ համաձայն ընդհանուր ընդունված խորհրդատվական սկզբունքների, հաստատված բյուջեի և համաձայնեցված տեխնիկական առաջադրանքի:

Խորհրդատուն պատասխանատվություն չի կրում երրորդ անձանց առջև սույն փաստաթղթի և/կամ դրա բովանդակության վրա հիմնված, դրանցից բխող կամ դրանցից արված հետևությունների համար: Ցանկացած հղում սույն փաստաթղթին կամ դրա բաղադրիչներին երրորդ անձանց սեփական պատասխանատվությունն է: Այստեղ ներկայացված եզրակացությունները, մեկնաբանությունները և առաջարկությունները հիմնված են մշակման պահին հասանելի տեղեկատվության վրա և կարող են վերանայվել, եթե նոր տվյալներ ի հայտ գան կամ Ծրագրի պայմանները փոխվեն:

Այստեղ առկա որոշակի տեղեկատվություն տրամադրվել է երրորդ անձանց կողմից և հնարավորության սահմաններում վերանայվել կամ ստուգվել է Խորհրդատուի կողմից, եթե փաստաթղթում այլ բան նշված չէ: Խորհրդատուն պատասխանատվություն չի կրում երրորդ անձանց կողմից նման տեղեկատվության ճշգրտության կամ ամբողջականության համար:

Սույն փաստաթուղթը և դրա բովանդակությունը չեն կարող վերարտադրվել, տարածվել կամ օգտագործվել որևէ այլ նպատակով, բացի այն նպատակից, որի համար այն մշակվել է՝ առանց Խորհրդատուի, ՎԶԵԲ-ի և Ջրային կոմիտեի նախնական գրավոր համաձայնության:

## ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

| | |
|---|---|
| ՓԲԸ | - Փակ Բաժնետիրական Ընկերություն |
| ՎԶԵԲ | - Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկ |
| ՇՄԱԳ | - Շրջակա Միջավայրի վրա Ազդեցության Գնահատում |
| ԲՍԳՊ | - Բնապահպանական և սոցիալական գործողությունների պլան |
| ՇՄՍԱԳ | - Շրջակա Միջավայրի և Սոցիալական Ազդեցության Գնահատում |
| ԲՍԱԱ | - Բնապահպանական, Սոցիալական, Առողջապահական և Անվտանգային |
| ԲՍԿՊ | - Բնապահպանական և Սոցիալական Կառավարման Պլան |
| ԲՍԿՀ | - Բնապահպանական և Սոցիալական Կառավարման Համակարգ |
| ԲՍՔ | - Բնապահպանական և Սոցիալական Քաղաքականություն |
| ԵՄ | - Եվրոպական Միություն |
| ԲևՍ | - Բնապահպանական և Սոցիալական |
| ՖԽՔ | - Ֆոկուս-խումբ Քննարկումներ |
| ԳՀԲՈ | - Գենդերային Հիմքով Բռնություն և Ոտնձգություն |
| ԼՄԳ | - Լավագույն Միջազգային Գործելակերպ |
| ծմբ | - ծովի մակերևույթից բարձր |
| ՇՄՆ | - Շրջակա Միջավայրի Նախարարություն |
| ՏԿԵՆ | - Տարածքային Կառավարման և Ենթակառուցվածքների Նախարարություն |
| ԱԱԱՊ | - Աշխատանքի Անվտանգություն և Առողջության Պահպանում |
| ԱԵԱ | - Ազդեցության Ենթարկված Անձ |
| ԾԻԳ | - Ծրագրի Իրագործման Գործակալություն |
| ԻՊ | - Իրագործման Պահանջներ |
| ՀՀ | - Հայաստանի Հանրապետություն |
| ՏԱ | - Տեխնիկական Առաջադրանք |
| ՀՀՋԿ | - Հայաստանի Հանրապետության Ջրային Կոմիտե |
| ՋՕԸ | - Ջրօգտագործողների Ընկերություն |
| ՇՄԱՓԿ | - Շրջակա Միջավայրի վրա Ազդեցության Փորձաքննական Կենտրոն |

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն ....6
2. Ծրագրի ամփոփ նկարագրություն....7
2.1 Արթիկի ջրամբար ....7
2.2 Ելփինի ջրամբար....8
2.3 Քասախի ջրամբար....9
2.4 Աստղաձորի ջրամբար....10
2.5 Լիճքի ջրամբար ....11
3. Շահառուների Ներգրավման և Տեղեկատվության Հրապարակման Պահանջները ....12
3.1 Ազգային պահանջներ....12
3.2 ՎԶԵԲ պահանջները ....14
4. Շահառուների Ներգրավման Առկա Գործելակերպերը և Ծրագրի Շրջանակներում Նախորդ Ներգրավածությունը ....15
4.1 2023-2024 թվականներին Ծրագրի Ազգային ՇՄԱԳ Գործընթացի Շրջանակներում Շահառուների Ներգրավածության Ամփոփումը ....16
4.2 2024-2025 թվականների Սոցիալ-Տնտեսական Ուսումնասիրության Ընթացքում Շահառուների Ներգրավման Ամփոփում ....25
5. Շահառուների Նույնականացում և Վերլուծություն....27
5.1 Շահառուների Նույնականացման Մեթոդաբանություն....28
5.2 Հիմնական Շահառուների Կատեգորիաներ և Խմբեր....28
5.3 Շահառուների Վերլուծություն....28
6. Շահառուների Ներգրավման Ծրագիր ....39
7. Բողոքարկման Մեխանիզմ....50
8. Մշտադիտարկում, Գնահատում և Հաշվետվողականություն ....53
Հավելված 1 - Հանրային բողոքի ձևանմուշ....55
Հավելված 2 - Շահառուների ներգրավվածության գրանցամատյանի ձևանմուշ....56

# 1. Ներածություն

Եվրոպական Միության (ԵՄ) «Վերականգնում, դիմակայունություն և բարեփոխումներ. Արևելյան գործընկերության գերակայությունները 2020 թվականից հետո» նախաձեռնության շրջանակներում ՀՀ կառավարությունը նախատեսում է կառուցել 17 ջրամբար, ինչը ուղղված է երկրում ջրային և պարենային անվտանգության մակարդակի բարձրացմանը: Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկը («ՎԶԵԲ» կամ «Բանկ») դիտարկում է ՀՀ կառավարությանը վարկ տրամադրելու հնարավորությունը՝ Հայաստանի տարբեր մարզերում հինգ ջրամբարների կառուցման ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր) ֆինանսավորելու համար: Դրանք են՝

- Քասախի ջրամբար Արագածոտնի մարզում,
- Լիճքի ջրամբար Սյունիքի մարզում,
- Ելփինի ջրամբար Վայոց ձորի մարզում,
- Արթիկի ջրամբար Շիրակի մարզում,
- Աստղաձորի ջրամբար Գեղարքունիքի մարզում:

Ծրագրի ջրամբարների տեղադրությունները ներկայացված են **Նկար 1**-ում:

**Նկար 1. Ծրագրի ջրամբարների քարտեզ**




ՎԶԵԲ-ը այս Ծրագիրը դասակարգել է որպես «Ա» կատեգորիայի՝ համաձայն իր Բնապահպանական և Սոցիալական Քաղաքականության («ԲՍՔ») (2019), քանի որ այն կարող է զգալի բնապահպանական և սոցիալական ազդեցություններ առաջացնել: Սա նշանակում է, որ պետք է մշակվի Շրջակա Միջավայրի վրա և Սոցիալական Ազդեցության Գնահատման (ՇՄՍԱԳ) համապարփակ հաշվետվություն և դրան կից փաստաթղթեր, որոնց հաջորդելու է դրանց առնվազն 120 օրյա հանրային հրապարակումը: Այս Շահառուների Ներգրավման Պլանը (ՇՆՊ) մշակվել է որպես Ծրագրի ՇՄՍԱԳ փաթեթի մաս:

Բանկը ներգրավել է Խորհրդատուի[1]՝ հինգ ջրամբարների կառուցման ազգային Շրջակա Միջավայրի վրա Ազդեցության Գնահատման («ՇՄԱԳ») հաշվետվությունները ՎԶԵԲ-ի

[1] ATMS Solutions Ltd. (Հայաստան) և Ecoline International Ltd. (Բուլղարիա) ընկերություններից բաղկացած կոնսորցիում

Բնապահպանական և Սոցիալական Քաղաքականության (ԲՍՔ) պահանջներին համապատասխանեցնելու և դրանց առնչվող Բնապահպանական և Սոցիալական (ԲևՍ) փաստաթղթերը մշակելու համար, ներառյալ սույն ՇՆՊ-ն (որպես ՇՄԱԳ փաթեթի մաս): Սույն ՇՆՊ-ը՝ Ծրագրի մյուս ԲևՍ փաստաթղթերի հետ միասին, ՎԶԵԲ-ի պահանջների համաձայն կհրապարակվի առնվազն 120 օրվա ընթացքում, ենթադրաբար՝ 2026 թվականի մայիսից մինչև սեպտեմբերը: Հրապարակմանը հաջորդիվ կմշակվի ՇՄՍԱԳ հանրային խորհրդակցության հաշվետվություն՝ ստացված շահառուների արձագանքը և հրապարակման գործընթացի ընթացքում իրականացված շահառուների ներգրավման գործողությունները փաստաթղթավորելու և ամփոփելու համար:

ՇՆՊ-ն կենդանի փաստաթուղթ է, որը նախատեսված է թարմացման և հետագա զարգացման համար՝ Ծրագրի առաջընթացին զուգընթաց, մասնավորապես՝ շահագործման փուլի մեկնարկից առաջ:

ՇՆՊ-ի նպատակներն են՝

- Ներկայացնել շահառուների ներգրավման գործընթացի վերաբերյալ ազգային իրավական շրջանակը և ՎԶԵԲ-ի պահանջները,
- Նույնականացնել Ծրագրի բոլոր շահառուներին, այդ թվում՝ նրանց, ովքեր կարող են համարվել խոցելի և կարող են ավելի շատ աջակցության կարիք ունենալ խորհրդակցական գործընթացի և Ծրագրի ողջ կենսացիկլի ընթացքում,
- Մշակել շահառուների ներգրավման ծրագիր, որը կիրականացվի՝ ապահովելու Ծրագրի վերաբերյալ Բնապահպանական և Սոցիալական տեղեկատվությունը ժամանակին տրամադրումը ու պատշաճ կերպով հաղորդակցումը Ծրագրի շահառուների հետ, և նրանց հետ հետադարձ կապի ուղիների հասանելիությունը,
- Սահմանել նշված շահառուների հետ իմաստալից և մշակութային առումով ներառական ներգրավվելու միջոցները,
- Առաջարկել ընթացակարգ կամ մեխանիզմ շահառուներից բողոքներ և առաջարկություններ ստանալու, գրանցելու և քննարկելու համար:

## 2. Ծրագրի ամփոփ նկարագրություն

Համաձայն նախագծային փաստաթղթերի՝ Ծրագրի ջրամբարների օգտակար ծավալները ներկայացված են ստորև.

- Արթիկի ջրամբար՝ 1.152 մլն. մ$^3$ (Շիրակի մարզ),
- Աստղաձորի ջրամբար՝ 1.55 մլն. մ$^3$ (Գեղարքունիքի մարզ),
- Լիճքի ջրամբար՝ 3.76 մլն. մ$^3$ (Սյունիքի մարզ),
- Ելփինի ջրամբար՝ 0.93 մլն. մ$^3$ (Վայոց ձորի մարզ),
- Քասախի ջրամբար՝ 10.0 մլն. մ$^3$ (Արագածոտնի մարզ):

### 2.1 Արթիկի ջրամբար

Արթիկի ջրամբարի հիդրավլիկ հանգույցը բաղկացած է հետևյալ բաղադրիչներից.

1. Պատվար,
2. Շինարարական ջրհեռ,
3. Մոտեցնող (սնուցող) ջրանցք,
4. Ոռոգման ջրանցք,
5. Ջրթող,
6. Հեղեղային ջրհեռ,
7. Էլեկտրամատակարարում:

Արթիկի ջրամբարի շինարարական հրապարակի նախատեսվող տարածքը գտնվում է Արթիկի բազմաբնակավայր համայնքի վարչական սահմաններում՝ 1700 մետր ծովի մակարդակից (մ.ծ.մ.) բարձր: Ջրամբարը ոռոգման ջուր կապահովի Արթիկ համայնքի հինգ գյուղական բնակավայրերի 300 հա գյուղատնտեսական հողերի համար՝ Նոր Կյանք, Վարդաքար, Փանիկ, Մեղրաշեն և Անուշավան գյուղերում (**Նկար 2**):

**Նկար 2. Արթիկի ջրամբարի, սնուցման և ոռոգման ջրանցքների քարտեզ**




Ջրամբարը կունենա 1.152 մլն. մ$^3$ օգտակար ծավալ: Արթիկի ջրամբարը և դրա բաղադրիչները կզբաղեցնեն 22.0 հա, իսկ սնուցման և ոռոգման խողովակաշարերը/ջրանցքերը՝ 9.607 հա: Շինարարական հրապարակը նախատեսվում է որ կզբաղեցնի մոտավորապես 76 հա տարածք: Ընդհանուր 76 հա-ից միայն 31.607 հա ձեռք կբերվի Ծրագրի համար: Մնացած հողամասերը պատշաճ կերպով կվերականգնվեն և կվերադարձվեն իրենց համապատասխան սեփականա-տերերին (համայնքին, պետությանը կամ մասնավորին):

## 2.2 Ելփինի ջրամբար

Ելփինի ջրամբարի հիդրավլիկ հանգույցը բաղկացած է հետևյալից բաղադրիչներից.

1. Պատվար,
2. Ջրթող,
3. Շինարարական ջրհեռ,
4. Ոռոգման ջրանցք և գլխավոր խողովակաշար:

Նախատեսվող Ելփինի ջրամբարը կգտնվի Ելփին գյուղի վարչական սահմաններում: Այն կառուցվելու է Արփա գետի աջափնյա վտակը հանդիսացող Ելփին գետի վրա՝ 1650-1700 մ.ծ.մ. բարձրության նիշերում: Ջրամբարը կապահովի Ելփին և Չիվա գյուղական բնակավայրերի մոտ 300 հա գյուղատնտեսական հողերի ոռոգումը: Ելփին գյուղը, տասը այլ գյուղական բնակավայրերի հետ միասին, ընդգրկված է Արենի խոշորացված համայնքի կազմում (**Նկար 3**):

**Նկար 3. Ելփին ջրամբարի քարտեզ**




Ելփինի ջրամբարը և դրան կից կառույցները կզբաղեցնեն 14.7 հա տարածք, որից 8.5 հա կզբաղեցնեն պատվարը և դրա օժանդակ կառույցները: Ջրամբարի օգտակար ծավալը կկազմի 0.93 մլն. մ$^3$: Պահեստավորված ջուրը կօգտագործվի Ելփինի և Չիվայի գյուղական բնակավայրերի 300 հա գյուղատնտեսական հողերի ոռոգման համար՝ սակավաջուր ամիսներին:

## 2.3 Քասախի ջրամբար

Քասախի ջրամբարի հիդրավլիկ հանգույցը բաղկացած է հետևյալ տարրերից.

1. Պատվար,
2. Շինարարական ջրհեռ 1 և 2,
3. Ոռոգման ջրթող,
4. Հատակային ջրթող,
5. Հեղեղային ջրհեռ:

Քասախի ջրամբարի կառուցումը նախատեսվում է իրականացնել Աշտարակ համայնքի Ոսկեհատ, Ոսկեվազ և Օշական գյուղերի (ՀՀ Արագածոտնի մարզ) և Խոյ համայնքի Ամբերդ և Այգեշատ գյուղերի (ՀՀ Արմավիրի մարզ) վարչական սահմաններում՝ Քասախ և Ամբերդ գետերի միախառնման կետում, 950-980 մ.ծ.մ. բարձրության վրա: Ջրամբարի համար առաջարկվող տարածքը հիմնականում ծանրաբեռնված է գյուղատնտեսական նշանակության համայնքային և մասնավոր հողերով, այդ թվում՝ արոտավայրերով և վարելահողերով:

Ջրամբարը կունենա 10 մլն. մ$^3$ օգտակար ծավալ: Ջրամբարը նախատեսված է Քասախ և Ամբերդ գետերից սնվելու համար և ջուր կմատակարարի Հրազդանի 2-րդ հերթի ստորին ջրանցքին, որի միջոցով կոռոգվեն Արմավիրի մարզի 21 բնակավայրերի 503 հա գյուղատնտեսական հողեր: (**Նկար 4**):

**Նկար 4. Քասախի ջրամբարի և դրա ոռոգման տարածքի քարտեզը**




Քասախի ջրամբարը կզբաղեցնի 89.7 հա տարածք, սակայն ընդհանուր առմամբ 145.26 հա հողատարածք մշտապես կհատկացվի Ծրագրի կարիքների, պատվարի և օժանդակ ենթակառուցվածքների համար:

Ընդհանուր առմամբ, ազդեցության են ենթարկվելու 280 հողամաս՝ 1,452,605.40 մ$^2$ մակերեսով, որոնք գտնվում են երկու համայնքների (Աշտարակ և Խոյ) հինգ բնակավայրերում (Ոսկեհատ, Ոսկեվազ, Օշական, Ամբերդ և Այգեշատ):

## 2.4 Աստղաձորի ջրամբար

Ջրամբարի հիդրավլիկ հանգույցը բաղկացած է հետևյալ տարրերից.

1. Պատվար,
2. Ջրհեռ,
3. Շինարարական ջրհեռ,
4. Ոռոգման մայր ջրատար ՈՋ 1 և ոռոգման բաժանարար ջրատարներ ՈՋ 1-1 և ՈՋ 1-2,
5. Հեղեղային ջրհեռ:

Աստղաձորի ջրամբարը կկառուցվի ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Աստղաձոր բնակավայրի վարչական սահմաններում՝ Աստղաձոր գետի վրա, 2100-2160 մ.ծ.մ. բարձրության նիշերում: Ջրամբարը կծառայի գետերի վարարումների կուտակմանը և ՀՀ Գեղարքունիքի մարզի Աստղաձոր, Վաղաշեն, Մարտունի և Ձոլաքար համայնքների 740 հա գյուղատնտեսական հողերի կայուն ոռոգման ապահովմանը սակավաջուր ամիսներին (**Նկար 5**):

**Figure 5. Աստղաձորի ջրամբարի և դրա ոռոգման տարածքի քարտեզը**




Աստղաձոր գետի ավազանում գտնվող Աստղաձոր, Զոլաքար, Վաղաշեն և մասամբ Մարտունի բնակավայրերի հողերի ոռոգումը հիմնականում իրականացվում է Աստղաձոր, Զոլաքար և Մարտունի բնակավայրերի պոմպակայաններով, գետից ինքնահոս ջրամատակարարումով՝ ոչ մեծ ջրանցքների և առուների, ինչպես նաև մի քանի խորքային հորերերի միջոցով:

Վերոնշյալ երեք պոմպակայանները ջուր են վերցնում Սևանա լճից, ջրանցքներն ու առուները՝ Աստղաձոր գետից, իսկ խորքային հորերը սնվում են ստորգետնյա ջրերից:

Ներկայումս չորս ջրօգտագործող բնակավայրերից երեքում 167 հա հողատարածքների համար իրականացվում է պոմպային, իսկ 34 հա հողատարածքների համար՝ ինքնահոս ոռոգում: Ներկայումս, Մարտունի բնակավայրի 150 հա հողատարածքները և մյուս երեք գյուղերի հողերի մեծ մասը չեն ոռոգվում ոռոգման ջրային ռեսուրսների բացակայության պատճառով:

Ջրամբարը, պատվարը և դրան կից կառույցները կզբաղեցնեն 13.53 հա տարածք, որից 11.6 հա-ն կզբաղեցնի ջրամբարը:

## 2.5 Լիճքի ջրամբար

Ջրամբարի հիդրավլիկ հանգույցը բաղկացած է հետևյալ տարրերից.

1. Պատվար,
2. Շինարարական ջրհեռ,
3. Ոռոգման ջրանցք,
4. Հեղեղային ջրհեռ,
5. Սպասարկման կառույցներ:

Լիճքի ջրամբարը կկառուցվի ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Լիճք բնակավայրում: Ջրամբարը նախատեսված է Մեղրի գետի վրա՝ Մեղրի, Ագարակ, Ալվանք, Շվանիձոր, Նռնաձոր, Լեհվազ, Վարդանիձոր և Կարճևան բնակավայրերի մոտ 1,510.8 հա հողատարածքներ ոռոգման ջրով ապահովելու նպատակով: Լիճքի ջրամբարը կծառայի Մեղրի, Ագարակ, Ալվանք, Շվանիձոր, Նռնաձոր, Լեհվազ, Վարդանիձոր և Կարճևան բնակավայրերի ոռոգմանը (**Նկար 6**):

**Նկար 6. Լիճքի ջրամբարի և դրա ոռոգման տարածքի քարտեզը**




Մեղրիի համայնքապետարանի կողմից տրամադրված տվյալների համաձայն՝ նշված բնակավայրերի ոռոգելի հողերը զբաղեցնում են 1,315.8 հա տարածք: Ջրային հաշվեկշռի գնահատականների համաձայն՝ Ծրագրի իրականացման արդյունքում կարող է ոռոգվել լրացուցիչ 195.0 հա: Այս հողերը ներկայումս չեն ոռոգվում, չնայած գրանցված են որպես ոռոգելի: Ներկայումս այս հողերը չեն մշակվում ոռոգման բացակայության պատճառով:

# 3. Շահառուների Ներգրավման և Տեղեկատվության Հրապարակման Պահանջները

## 3.1 Ազգային պահանջներ

ՀՀ-ն վավերացրել է Օրհուսի կոնվենցիան[2] 2001 թվականին: Այս կոնվենցիան նախատեսում է յուրաքանչյուրի իրավունքը՝ ստանալու պետական մարմիններում առկա շրջակա միջավայրի վերաբերյալ տեղեկատվություն, մասնակցելու շրջակա միջավայրի վերաբերյալ որոշումների կայացմանը և վերանայելու այն հանրային որոշումները վիճարկելու ընթացակարգերը, որոնք կայացվել են առանց վերը նշված երկու իրավունքների կամ շրջակա միջավայրի բնագավառում

[2]ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի կոնվենցիա՝ «Տեղեկատվության հասանելիության, որոշումների կայացմանը հանրության մասնակցության և շրջակա միջավայրի հարցերով արդարադատության հասանելիության մասին» https://ec.europa.eu/environment/aarhus/

օրենսդրությունը հաշվի առնելու: Հայաստանում գործում է 15 Օրհուսի կենտրոն. մեկը՝ Երևանում և 14-ը՝ մարզերում[3]:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքը[4] սահմանում է յուրաքանչյուր անձի իրավունքը հարցումով դիմել տեղեկատվություն տնօրինողին՝ ծանոթանալու իր կողմից որոնվող տեղեկատվությանը և/կամ ստանալու այն՝ օրենքով սահմանված կարգով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքը (2014թ., վերանայված՝ 2023թ.)[5] սահմանում է, որ պետական մարմինները և տեղական ինքնակառավարման մարմինները պարտավոր են ապահովել տեղեկատվության հասանելիության և հանրության մասնակցության իրավունքը շրջակա միջավայրի վիճակի վերաբերյալ որոշումների կայացմանը, ինչպես նաև հայտարարություն տարածել այդ որոշումների կայացման եղանակի վերաբերյալ: Սույն օրենքը և դրան կից ենթաօրենսդրական ակտերը սահմանում են շրջակա միջավայրի վրա էական ազդեցություն ունեցող պետական և մասնավոր գործունեությունների ՇՄԱԳ իրականացման պահանջները՝ նախքան համաձայնության/ շինարարության թույլտվության տրամադրումը:

Օրենքը սահմանում է ՇՄԱԳ-ի ենթակա գործունեությունների վերաբերյալ ծանուցման, փաստաթղթավորման, հանրային քննարկումների և բողոքարկման ընթացակարգերն ու պահանջները: Օրենքի 12-րդ հոդվածի համաձայն՝ ՇՄԱԳ-ի ենթակա գործունեության տեսակները բաժանվում են Ա և Բ կատեգորիաների՝ կախված շրջակա միջավայրի վրա դրանց սպասվող ազդեցությունից: Նույն հոդվածի համաձայն՝ 3.0 մլն. մ$^3$-ից ավելի ծավալ ունեցող ջրամբարները կամ արհեստական լճերը դասակարգվում են որպես «Ա» կատեգորիա, մինչդեռ 500,000 մ$^3$-ից մինչև 3.0 մլն. մ$^3$ ծավալ ունեցողները դասակարգվում են որպես «Ա» կատեգորիայի գործունեություն/ծրագիր: Հետևաբար, երկու կատեգորիաներն էլ ենթակա են ազգային ՇՄԱԳ-ի և պետական փորձագիտական փորձաքննության:

Օրենքի համաձայն, հանրային ծանուցումներն ու քննարկումները համատեղ իրականացվում են Ծրագրի նախաձեռնողի և Շրջակա միջավայրի նախարարության (ՇՄՆ) ենթակայության տակ գտնվող Շրջակա Միջավայրի վրա Ազդեցության Փորձաքննական Կենտրոնի (ՇՄԱՓԿ) կողմից, որը հանդիսանում է փորձաքննության գործընթացի համար պատասխանատու լիազորված պետական մարմին: Հանրային քննարկումների կազմակերպումը ազդակիր համայնքի (այսինքն՝ համայնքի) պատասխանատվությունն է:

Վերոնշյալ օրենքի համաձայն՝ Լիճքի և Քասախի ջրամբարների Ծրագրերը պատկանում են «Ա» կատեգորիային, իսկ Ելփինի, Աստղաձորի և Արթիկի՝ «Բ» կատեգորիային: Այս ծրագրերի համար օրենքով նախատեսված է հանրային քննարկումների չորս փուլ՝ երկուսը՝ նախնական ՇՄԱԳ փուլում և երկուսը՝ հիմնական ՇՄԱԳ փուլում:

**Նախնական ՇՄԱԳ փուլ.**

- ***Առաջին հանրային քննարկումը*** կազմակերպվում է Ծրագրի նախաձեռնողի և ազդակիր համայնքների ղեկավարների կողմից համատեղ՝ Ծրագրի նպատակը և հիմնական բաղադրիչները, բնապահպանական և սոցիալական շրջանակը ներկայացնելու և ազդակիր համայնքի նախնական համաձայնությունը ստանալու նպատակով,
- ***Երկրորդ հանրային քննարկումը*** կազմակերպվում է ՇՄԱՓԿ-ի և ազդակիր համայնքների ղեկավարների կողմից համատեղ՝ նախնական ՇՄԱԳ-ի հիմնական արդյունքները ներկայացնելու և Ծրագրի ՇՄԱԳ-ի հիմնական փուլի համար լիազոր

[3]https://aarhus.osce.org/armenia
[4]https://www.arlis.am/hy/acts/175858
[5]Կարևոր է նշել, որ չնայած «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքում փոփոխություններ են կատարվել 2023 թվականին, ծրագրի ՇՄԱԳ հաշվետվությունները պատրաստվել են օրենքի նախորդ վերանայման հիման վրա:

պետական մարմնի կողմից հրապարակվելիք տեխնիկական առաջադրանքի Ծրագրի քննարկման նպատակով:

**Հիմնական ՇՄԱԳ փուլ.**

- ***3-րդ հանրային քննարկումը*** կազմակերպվում է Ծրագրի նախաձեռնողի և ազդակիր համայնքների ղեկավարների կողմից համատեղ՝ ՇՄԱԳ ուսումնասիրությունների հիմնական արդյունքները և առաջարկվող մեղմացնող ու մշտադիտարկման միջոցառումները քննարկելու նպատակով,
- ***4-րդ հանրային քննարկումը*** կազմակերպվում է ՇՄԱՓԿ-ի և ազդակիր համայնքների ղեկավարների կողմից համատեղ՝ ՇՄԱԳ գործընթացի մասնակիցների և շահառուների կողմից բարձրացված մեկնաբանությունների վերաբերյալ արձագանք ստանալու և շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության եզրակացությունների նախագծերը քննարկելու համար:

## 3.2 ՎԶԵԲ պահանջները

ՎԶԵԲ-ի կողմից ֆինանսավորվող բոլոր ծրագրերը պետք է կառուցված լինեն ՎԶԵԲ-ի բնապահպանական և սոցիալական քաղաքականության (ԲՍՔ, 2019) պահանջների համաձայն, որը ներառում է շրջակա միջավայրի և սոցիալական կայունության հիմնական ոլորտների համար սահմանված տասը կատարողական պահանջներ (ԿՊ), այդ թվում՝ ԿՊ10 «Տեղեկատվության հրապարակում և շահառուների ներգրավում»[6] պահանջը:

Բացի այդ, ՎԶԵԲ-ի անկախ ծրագրերի հաշվետվողականության մեխանիզմը[7], որպես բողոքների լուծման վերջին անկախ գործիք, միտված է նպաստել ՎԶԵԲ-ի կողմից ֆինանսավորվող նախագծերի վերաբերյալ ազդակիր անձանց և հասարակական կազմակերպությունների կողմից Ծրագրի շահառուների շրջանում բարձրացված սոցիալական, բնապահպանական և հանրային հրապարակման հարցերի լուծմանը, կամ որոշել, թե արդյոք Բանկը պահպանել է իր ԲՍՔ-ը և Տեղեկատվության հասանելիության քաղաքականության[8] Ծրագրին վերաբերող դրույթները և, որտեղ կիրառելի է, լուծել այդ քաղաքականությունների նկատմամբ առկա ցանկացած անհամապատասխանություն՝ միևնույն ժամանակ կանխելով Բանկի կողմից ապագա անհամապատասխանությունները:

Համաձայն ԻՊ10-ի՝ շահառուների ներգրավումը ներառում է հետևյալ տարրերը.

- **Շահառուների նույնականացում,** ներառյալ Ծրագրի ազդակիր այն կողմերի (անհատներ կամ խմբեր), ովքեր որոշակի հանգամանքների պատճառով կարող են տուժած կամ խոցելի լինել, և Ծրագրի համար համապատասխան հաղորդակցության մակարդակը որոշելու համար վերլուծությունը,
- **Շահառուների ներգրավման պլանավորում** ՇՆՊ-ի մշակման ընթացքում, որը նկարագրում է, թե ինչպես է իրականացվելու նույնականացված շահառուների ներգրավումը Ծրագրի ողջ կենսացիկլի ընթացքում,
- **Տեղեկատվության հրապարակում** որը կապահովի, որ Ծրագրի վերաբերյալ համապատասխան տեղեկատվությունը, ներառյալ դրա բնապահպանական և սոցիալական ազդեցությունները, ռիսկերը և հնարավորությունները, կտրամադրվի շահագրգիռ կողմերին՝ բովանդակալից խորհրդակցությունների հետ միասին: Դա երկու ուղղություններով շարունակելի գործընթաց է,
- **Բողոքարկման մեխանիզմ,** որը ստեղծվել է շահառուների մտահոգություններն ու բողոքները, մասնավորապես. պատվիրատուի բնապահպանական և սոցիալական արդյունավետության վերաբերյալ, ստանալու և դրանց լուծումը հեշտացնելու համար,

[6] https://www.ebrd.com/news/publications/policies/environmental-and-social-policy-esp.html
[7] https://www.ebrd.com/what-we-do/independent-project-accountability-mechanism.html
[8] https://www.ebrd.com/what-we-do/strategies-and-policies/access-to-information-policy.html

- **Ընթացիկ հաշվետվողականություն** շահառուների նկատմամբ՝ ԲԱՍ պահանջների վերաբերյալ:

ՎԶԵԲ-ը մշակել է նաև «ԻՊ 10-ի ձեռնարկը. Տեղեկատվության հրապարակում և շահառուների ներգրավում» (2023)[9], որը ՎԶԵԲ-ի պատվիրատուներին և շահառուներին տրամադրում է գործնական ուղեցույց ԻՊ 10-ի մեկնաբանման և կիրառման համար, ինչպես նաև առաջարկում է շահառուների ներգրավման տարբեր բաղադրիչների իրականացման Լավագույն Միջազգային Գործելակերպի (ԼՄԳ) մոտեցումներ:

## 4. Շահառուների Ներգրավման Առկա Գործելակերպերը և Ծրագրի Շրջանակներում Նախորդ Ներգրավածությունը

Սույն Գլուխը նկարագրում է շահառուների ներգրավման գործողությունները, որոնք իրականացված/իրականացվելու են՝

1) **Ծրագրի մշակման վաղ փուլերում (2023-2024)** ազգային ՇՄԱԳ խորհրդատուի կողմից (ավարտված է),
2) **Սոցիալ-տնտեսական ուսումնասիրության շրջանակներում (2024-2025)** Խորհրդա-տուի կողմից՝ Ծրագրի ՇՄՍԱԳ-ի և Տարաբնակեցման Շրջանակի (ՏՇ) նպատակների համար (ավարտված է), և
3) **Ծրագրի ՇՄՍԱԳ փաթեթի հրապարակման ժամանակահատվածում,** նախնակա-նապես նախատեսված է 2026 թվականի մայիսից մինչև սեպտեմբեր (ավարտ):

Ազգային ՇՄԱԳ խորհրդատուն պատասխանատու էր Ծրագրի ջրամբարների ՇՄԱԳ հաշվետվությունների մշակման և շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության ողջ գործընթացի ընթացքում տեխնիկական աջակցություն ցուցաբերելու համար, որն իրականացվում էր Շրջակա միջավայրի նախարարության ենթակայության ներքո գործող լիազոր պետական մարմնի՝ Շրջակա Միջավայրի վրա Ազդեցության Փորձաքննական Կենտրոնի (ՇՄՓՓԿ) կողմից:

Նախ, ազգային ՇՄԱԳ շրջանակներում 2024 թվականի գարնանը իրականացված սոցիալական ուսումնասիրությունների շրջանակներում ազգային ՇՄԱԳ խորհրդատուները[10] անցկացրել են ֆոկուս-խումբ քննարկումներ և հարցազրույցներ ազդակիր համայնքների կամ բնակավայրերի ղեկավարների հետ, ինչպես նաև որոշակի բովանդակալից խորհրդակցություններ խոցելի խմբերի ներկայացուցիչների հետ:

Երկրորդ, Ծրագրի ՇՄՍԱԳ հաշվետվությունների և Տարաբնակեցման Շրջանակի (2024-2025) մշակման ընթացքում խորհրդակցություններ և հարցազրույցներ են անցկացվել ազդակիր համայնքների ղեկավարների, ազդակիր բնակավայրերի վարչական ղեկավարների, ինչպես նաև այն բնակիչների հետ, ովքեր կարող են կորցնել իրենց եկամուտը կամ գույքը Ծրագրի իրականացման հետևանքով: Այս ներգրավման գործողությունները կազմել են Ծրագրի սոցիալ-տնտեսական ուսումնասիրությունների անբաժանելի մասը և իրականացվել են ՎԶԵԲ-ի պահանջներին և շահառուների բովանդակալից ներգրավման համար ԼՄԳ սկզբունքներին համապատասխան:

[9] https://www.ebrd.com/information-disclosure-and-stakeholder-engagement.pdf
[10] Երկու ընկերություն ներգրավված էին ջրամբարների Ծրագրի ազգային ՇՄԱԳ ուսումնասիրությունների իրականացման գործում: Աստղաձորի, Քասախի, Լիճքի և Ելփինի ջրամբարների ազգային ՇՄԱԳ ուսումնասիրությունները կատարվել են մեկ խորհրդատվական ընկերության կողմից, մինչդեռ Արթիկի ջրամբարի ուսումնասիրությունը՝ մեկ այլ ընկերության կողմից:

## 4.1 2023-2024 թվականներին Ծրագրի Ազգային ՇՄԱԳ Գործընթացի Շրջանակներում Շահառուների Ներգրավածության Ամփոփումը

*«ՀՀ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին»* օրենքի և ՀՀ կառավարության *№ 1325-Ն* որոշմամբ սահմանված կարգով հանրային քննարկումների չորս փուլ է իրականացվել՝ համաձայն *«Հանրային իրազեկման և հանրային լսումների ծանուցման բովանդակությունը, հանրային լսումների ընթացակարգը, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության գործընթացում շահագրգիռ հանրության կարծիքների, դիտողությունների և առաջարկությունների ներկայացման, տեղական ինքնակառավարման մարմինների կողմից նախնական համաձայնության կամ անհամաձայնության տրամադրման ընթացակարգը և ժամկետները սահմանելու մասին»* պահանջների[11]:

Ազգային ՇՄԱԳ փուլի հանրային քննարկումների ամփոփագրերը, ներառյալ դրանց ժամանակացույցը, օրակարգերը, ինչպես նաև մասնակիցների կողմից յուրաքանչյուր ջրամբարի վերաբերյալ բարձրացված հիմնական մեկնաբանություններն ու առաջարկությունները, ներկայացված են ստորև **Աղյուսակ 1**-ում:

**Աղյուսակ 1. Ազգային ՇՄԱԳ գործընթացի հանրային քննարկումների ամփոփումը**

| № | Ծրագրի բաղադրիչ | Ամսաթիվ | Գտնվելու վայրը | Օրակարգ / Թեմաներ |
|---|---|---|---|---|
| **1-ին հանրային քննարկումներ** | | | | |
| 1.1 | Լիճքի ջրամբար | 26.12.2023 | Լիճք բնակավայրի վարչական ղեկավարի նստավայր, Մեղրի համայնք, Սյունիքի մարզ | - Ծրագրի նպատակի և հիմնական բաղադրիչների ներկայացում,<br>- Բնապահպանական և սոցիալական շրջանակ,<br>- Ազդակիր համայնքի նախնական համաձայնությունը: |
| 1.2 | Արթիկի ջրամբար | 15.09.2023 | Արթիկի համայնքապետարան, Արթիկ համայնք, Շիրակի մարզ | |
| 1.3 | Աստղաձորի ջրամբար | 18.12.2023 | Աստղաձոր բնակավայրի վարչական ղեկավարի նստավայր, Մարտունի համայնք, Գեղարքունիքի մարզ | |
| 1.4 | Ելփինի ջրամբար | 20.12.2023 | Ելփին բնակավայրի վարչական ղեկավարի նստավայր, Արենի համայնք, Վայոց Ձորի մարզ | |
| 1.5 | Քասախի ջրամբար | 20.12.2023 | Ամբերդ բնակավայրի վարչական ղեկավարի նստավայր, Խոյ համայնք, Արմավիրի մարզ | |
| **2-րդ հանրային քննարկումներ** | | | | |
| 2.1 | Լիճքի ջրամբար | 03.04.2024 | Մեղրիի համայնքապետարան, Մեղրի համայնք, Սյունիքի մարզ | - Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հիմնական արդյունքները,<br>- Լիազոր պետական մարմնի կողմից հրապարակվելիք տեխնիկական առաջադրանքի նախագիծը: |
| 2.2 | Արթիկի ջրամբար | 15.12.2023 | Նոր Կյանք բնակավայրի վարչական ղեկավարի նստավայր, Արթիկ համայնք, Շիրակի մարզ | |
| 2.3 | Աստղաձորի ջրամբար | 08.05.2024 | Աստղաձոր բնակավայրի վարչական ղեկավարի նստավայր, Մարտունի համայնք, Գեղարքունիքի մարզ | |
| 2.4 | Ելփինի ջրամբար | 25.03.2024 | Ելփին բնակավայրի վարչական ղեկավարի նստավայր, Արենի համայնք, Վայոց Ձորի մարզ | |

[11] Օրենքի 2023 թվականի փոփոխության համաձայն՝ ՇՄԱԳ-ի և փորձաքննության գործընթացի ընթացքում պահանջվում է հանրային քննարկումների ընդամենը երկու փուլ (չորսի փոխարեն): Սակայն, այն պահին, երբ սկսվեցին Ծրագրի ջրամբարների ՇՄԱԳ-ները, այս փոփոխությունը դեռևս ուժի մեջ չէր մտել:

| № | Ծրագրի բաղադրիչ | Ամսաթիվ | Գտնվելու վայրը | Օրակարգ / Թեմաներ |
|---|---|---|---|---|
| 2.5 | Քասախի ջրամբար | 26.03.2024 | Ամբերդ բնակավայրի վարչական ղեկավարի նստավայր, Խոյ համայնք, Արմավիրի մարզ | |
| | | | Ոսկեվազ բնակավայրի վարչական ղեկավարի նստավայր, Աշտարակ համայնք, Արագածոտնի մարզ | |
| **3-րդ հանրային քննարկումներ** | | | | |
| 3.1 | Լիճքի ջրամբար | 06.06.2024 | Մեղրիի համայնքապետարան, Մեղրի համայնք, Սյունիքի մարզ | -ՇՄԱԳ ուսումնասիրությունների հիմնական արդյունքները,<br>-Առաջարկվող մեղմացնող և մոնիթորինգի միջոցառումներ: |
| 3.2 | Արթիկի ջրամբար | 11.07.2024 | Նոր Կյանք բնակավայրի վարչական ղեկավարի նստավայր, Արթիկ համայնք, Շիրակի մարզ | |
| 3.3 | Աստղաձորի ջրամբար | 27.06.2024 | Աստղաձոր բնակավայրի վարչական ղեկավարի նստավայր, Մարտունի համայնք, Գեղարքունիքի մարզ | |
| 3.4 | Ելփինի ջրամբար | 27.05.2024 | Ելփին բնակավայրի վարչական ղեկավարի նստավայր, Արենի համայնք, Վայոց Ձորի մարզ | |
| 3.5 | Քասախի ջրամբար | 29.05.2024 | Արմավիրի մարզի Խոյ համայնքի Ամբերդ բնակավայրի վարչական ղեկավարի նստավայր | |
| | | 29.05.2024 | Ոսկեվազ բնակավայրի վարչական ղեկավարի նստավայր, Աշտարակ համայնք, Արագածոտնի մարզ | |
| **4-րդ հանրային քննարկումներ** | | | | |
| 4.1 | Լիճքի ջրամբար | 03.09.2024 | Մեղրիի համայնքապետարան, Մեղրի համայնք, Սյունիքի մարզ | -Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության գործընթացի մասնակիցների և շահառուների կողմից բարձրացված մեկնաբանությունների վերաբերյալ արձագանք,<br>-Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության եզրակացության նախագիծ: |
| 4.2 | Արթիկի ջրամբար | 12.11.2024 | Արթիկ համայնք, Շիրակի մարզ | |
| 4.3 | Աստղաձորի ջրամբար | 09.10.2024 | Աստղաձոր բնակավայրի վարչական ղեկավարի նստավայր, Մարտունի համայնք, Գեղարքունիքի մարզ | |
| 4.4 | Ելփինի ջրամբար | 06.08.2024 | Ելփին բնակավայրի վարչական ղեկավարի նստավայր, Արենի համայնք, Վայոց Ձորի մարզ | |
| 4.5 | Քասախի ջրամբար | 20.08.2024 | Re Ամբերդ բնակավայրի վարչական ղեկավարի նստավայր, Խոյ համայնք, Արմավիրի մարզ | |
| | | 20.08.2024 | Ոսկեվազ բնակավայրի վարչական ղեկավարի նստավայր, Աշտարակ համայնք, Արագածոտնի մարզ | |

**Հանրային քննարկումների հիմնական եզրակացությունները**

- Բոլոր հինգ ջրամբարների կառուցման ծրագրերում ներգրավված բնակավայրերի բնակիչների ընդհանուր վերաբերմունքը դրական է: Մասնակիցների մեծ մասը զբաղվում է մշակաբույսերի մշակությամբ, հետևաբար, լրացուցիչ ոռոգման ջրի առկայությունը համարվում է օգտակար:
- Հանրային քննարկումների ընթացքում մասնակիցների կողմից բարձրացված հարցերն ու մտահոգությունները դասակարգվել են չորս խմբի.

  *1) Տեխնիկական և նախագծային հարցեր*

| № | Ծրագրի բաղադրիչ | Ամսաթիվ | Գտնվելու վայրը | Օրակարգ / Թեմաներ |
|---|---|---|---|---|

- Ջրամբարի և պատվարի տեխնիկական բնութագրերը (օրինակ՝ պահեստավորման ծավալը, մակերեսը, պատվարի բարձրությունը և այլն),
- Ջկնուղիների և ջրամբարի այլ բաղադրիչների կառուցումը, հանքերի տեղակայումը և անհրաժեշտ ծավալները,
- Գետի հունի կանխատեսվող փոփոխությունները, հողային աշխատանքների ծավալները և տեսակները, ինչպես նաև պայթեցման անհրաժեշտությունը:

2) *Բնապահպանական և հիդրոլոգիական ասպեկտներ*
- Ջրամբարի լցման և բնապահպանական թողքի պահպանման համար ջրային ռեսուրսների առկայությունը,
- Ջրի որակն ապահովելու կամ բարելավելու միջոցառումները,
- Բուսական և կենդանական աշխարհի վերաբերյալ մտահոգությունները,
- Բուսահողի և թափոնների պահեստավորման տարածքների կառավարումը:

3) *Հողօգտագործման, սեփականության և անվտանգության հարցեր*
- Հողերի ձեռքբերման մեխանիզմները և ընթացակարգերը,
- Հողի և բերքի փոխհատուցման գործընթացները,
- Հողօգտագործման հետ կապված անվտանգության նկատառումներ:

4) *Գործառնական և համայնքային նկատառումներ*
- Շինարարության և շահագործման փուլերում շրջակա համայնքների բնակիչների համար հավանական զբաղվածության հնարավորություններ,
- Ջրամբարների շահագործման և պահպանման կազմակերպումը,
- Հնարավոր սեյսմիկ ռիսկերը և նախատեսված մեղմացնող միջոցառումները:

- Լիազորված պետական մարմնի կողմից բոլոր հինգ ջրամբարային Ծրագրերի համար տրվել են դրական փորձաքննական եզրակացություններ.
  - Ելփինի ջրամբարի վերաբերյալ 23.09.2024 թվականի №197-24 եզրակացություն,
  - Լիճքի ջրամբարի վերաբերյալ 16.10.2024 թվականի №215-24 եզրակացություն,
  - Քասախի ջրամբարի վերաբերյալ 01.11.2024 թվականի №233-24 եզրակացություն,
  - Աստղաձորի ջրամբարի վերաբերյալ 06.12.2024 թվականի №265-24 եզրակացություն,
  - Արթիկի ջրամբարի վերաբերյալ 13.12.2024 թվականի №278-24 եզրակացություն:.

Ֆոկուս-խումբ Քննարկումները (ՖԽՔ) անցկացվել են ազգային ՇՄԱԳ խորհրդատվական թիմերի մասնագետների կողմից՝ 2024 թվականի գարնանը՝ սոցիալական ուսումնասիրություն-ների շրջանակում: Կանանց և տղամարդկանց հետ ՖԽՔ-ը անցկացվել են Աստղաձոր, Մեղրի և Ելփին բնակավայրերում, մինչդեռ միայն կանանց հետ քննարկումները՝ Ոսկեվազ գյուղում: Արթիկի ջրամբարի համար ՖԽՔ-ը տեղի են ունեցել Նոր Կյանք, Փանիկ, Անուշավան և Մեղրաշեն բնակավայրերում: Հանդիպումներ են անցկացվել նաև Ծրագրի ազդակիր բնակավայրերի ներկայացուցիչների հետ: Այս գործողությունների մանրամասները և հիմնական արդյունքները ամփոփված են ստորև բերված **Աղյուսակ 2**-ում:

**Աղյուսակ 2. Ազգային ՇՄԱԳ խորհրդատուների կողմից անցկացված ՖԽՔ-ների և այլ ներգրավվածության միջոցառումների ամփոփումը**

| Ամսաթիվ | Վայր | Ներգրավ-վածության տեսակ | Մասնակիցների պրոֆիլ | Քննարկվող թեմաներ |
|---|---|---|---|---|
| **ԱՍՏՂԱՁՈՐԻ ՋՐԱՄԲԱՐ** | | | | |
| 08.05.2024 | Աստղաձոր գյուղ | ՖԽՔ՝ կանայք | Երեք մասնակիցներ 41-60 տարեկան էին, մեկը՝ 18-25, իսկ մեկը՝ 26-40 տարեկան:<br>Ընտանիքի միջին չափը հինգ անդամ էր: | Մասնակիցները նշեցին, որ գյուղում եկամտի հիմնական աղբյուրները գյուղատնտեսական գործունեությունն է, այդ թվում՝ բուսաբուծությունը և |

| Ամսաթիվ | Վայր | Ներգրավ-վածության տեսակ | Մասնակիցների պրոֆիլ | Քննարկվող թեմաներ |
|---|---|---|---|---|
| | | | Ընտանիքի եկամտի հիմնական աղբյուրներն էին պետական կամ համայնքային աշխատանքի վարձատրությունը (չորս մասնակից), գյուղատնտեսությունից ստացված եկամուտը (չորս մասնակից) և արտագնա աշխատանքից ստացված եկամուտը (մեկ մասնակից):<br>Բոլոր մասնակիցներն էլ ունեին տնամերձ հողամասեր, իսկ երկուսը՝ նաև արոտավայրեր: | անասնապահությունը, չնայած որոշ տնային տնտեսություններ անասուններ չեն պահում: Նրանք նշեցին, որ կան ինչպես խոշոր հողատերեր, որոնք մշակում են իրենց սեփական հողամասերը, այնպես էլ ֆերմերներ, որոնք վարձակալում և մշակում են հարևաններին կամ ազգականներին պատկանող հողերը: Մասնակիցները մտահոգություն հայտնեցին, որ բնակչության աճը մեծացնում է ջրի պահանջարկը: Այնուամենայնիվ, նրանք դրական էին տրամադրված ոռոգման ջրի հուսալի հասանելիության հեռանկարի նկատմամբ, քանի որ դա ավելի շատ բնակիչների հնարավորություն կտա լիարժեք մշակել իրենց հողերը, այդպիսով ավելացնելով տնային տնտեսությունների եկամուտը և բարելավելով կենսապայմանները: |
| 08.05.2024 | Աստղաձոր գյուղ | ՖԽՔ՝ տղամարդիկ | Երկու մասնակից 26-40 տարիքային խմբում էին, երկուսը՝ 41-60 տարիքային խմբում, իսկ երեքը՝ 61 տարեկանից բարձր:<br>Ընտանիքի միջին չափը հինգ անդամ էր:<br>Ընտանիքի եկամտի հիմնական աղբյուրներն էին պետական կամ համայնքային աշխատանքի վարձատրությունը (տնային տնտեսությունների 28.6%-ը), մասնավոր գործունեությունից կամ գյուղատնտեսությունից ստացված եկամուտը (57.1%) և կենսաթոշակները կամ սոցիալական նպաստները (57.1%): | Մասնակիցները հայտնեցին, որ իրենք ունեն տնամերձ հողեր, վարելահողեր, պտղատու այգիներ և խոտհարքեր: Սակայն, ջրի պակասի պատճառով, նրանք չեն կարողանում լիովին մշակել իրենց հողերը և ներկայումս կախված են խորքային հորերից ոռոգման սահմանափակ հնարավորություններից:<br>Նրանք հույս հայտնեցին, որ ջրամբարի կառուցումը հնարավորություն կտա ընդլայնել մշակովի տարածքները, ինչը կհանգեցնի բերքատվության բարձրացմանը, համայնքի գյուղատնտեսական ներգրավվածության աճին և գյուղատնտեսական եկամուտների բարելավմանը: Նրանք կարծում են, որ ջրամբարը զգալիորեն կբարելավի տեղի բնակիչների սոցիալ-տնտեսական պայմանները: |

| Ամսաթիվ | Վայր | Ներգրավ-վածության տեսակ | Մասնակիցների պրոֆիլ | Քննարկվող թեմաներ |
|---|---|---|---|---|
| ***Աստղաձոր գյուղի վարչական ղեկավարի հետ հարցազրույցը տեղի է ունեցել 2024 թվականի մայիսի 8-ին:*** Նա իր գնահատանքն է հայտնել նախատեսված ջրամբարի կառուցմանը՝ նշելով, որ այն հնարավորություն կտա ընդլայնել մշակովի հողատարածքները և մշակել բարձրարժեք մշակաբույսեր, ինչպիսիք են կանաչ լոբին, վարունգը, ծաղկակաղամբը և բրոկկոլին: Նա նշել է, որ նաև ակնկալվում է, որ ջրամբարը կնպաստի բարձրորակ ծիրանի և բալի արտադրությանը: Ջրամբարի կառուցման արդյունքում, կանխատեսվում է, որ կաճի գյուղացիների թիվը, կընդլայնվեն գյուղատնտեսական զբաղվածության հնարավորությունները, կբարձրանան տնային տնտեսությունների եկամուտները, և կնվազի արտագնա աշխատուժից կախվածությունը: | | | | |
| **ԼԻՃԿԻ ՋՐԱՄԲԱՐ** | | | | |
| 03.04.2024 | Մեղրի քաղաք | ՖԽՔ՝ կանայք | Մասնակիցներից մեկը 18-25 տարեկան էր, երկուսը՝ 26-40, իսկ երեքը՝ 41-60 տարեկան:<br>Տնային տնտեսության միջին չափը տատանվում էր 3-ից 6 անդամի սահմաններում, որոնցից երեքը ապրում էին 3-4 անդամից բաղկացած տնային տնտեսություններում, իսկ երեքը՝ 5-6 անդամից բաղկացած տնային տնտեսություններում:<br>Չորս մասնակիցներ զբաղվում էին համայնքային աշխատանքներով, իսկ երեքը՝ մասնավոր գործունեությամբ: | Մասնակիցները նշեցին, որ գյուղատնտեսական հողերի, մասնավորապես՝ պտղատու այգիների մշակումը համայնքի համար եկամտի կարևոր աղբյուր է: Նրանք ընդգծեցին, որ ոռոգման ջրի հասանելիությունը կարևոր է բարձրորակ բերք ստանալու համար, որը կարող է վաճառվել եկամուտ ստանալու համար:<br>Նրանք նշեցին, որ խոշոր ֆերմերների համար գյուղատնտեսությունը հիմնական ապրուստի միջոցն է: Այս ֆերմերները ոչ միայն աշխատում են իրենց սեփական հողերում, այլև աշխատանք են ապահովում համայնքի բազմաթիվ անդամների համար: Բացի այդ, նրանք կարող են գնել բերք վերամշակման համար, ստեղծելով լրացուցիչ աշխատատեղեր և զգալիորեն նպաստելով տեղական տնտեսությանը:<br>Մասնակիցները նաև նշեցին, որ ջրամբարի կառուցումը կավելացնի գյուղատնտեսությամբ զբաղվող ֆերմերային տնտեսությունների թիվը, կբարձրացնի գյուղատնտեսական եկամուտները և կբարելավի համայնքի ընդհանուր կենսամակարդակը: |
| 03.04.2024 | Մեղրի քաղաք | ՖԽՔ՝ տղամարդիկ | Երկու մասնակից 41-60 տարեկան էին, մեկը՝ 26-40 տարեկան, իսկ երկուսը՝ 61 տարեկանից բարձր: Տնային տնտեսությունների (SS) | Ֆոկուս խմբի մասնակիցները գյուղատնտեսությունը նշեցին որպես իրենց եկամտի հիմնական աղբյուր: Նրանք նշեցին մի քանի մարտահրավերներ, այդ թվում՝ |

| Ամսաթիվ | Վայր | Ներգրավ-վածության տեսակ | Մասնակիցների պրոֆիլ | Քննարկվող թեմաներ |
|---|---|---|---|---|
| | | | չափերը տարբեր էին՝ երկու մասնակից ապրում էին երկու անդամից բաղկացած ՏՏ-ներում, իսկ մնացած երեքը՝ համապատասխանաբար երեք, վեց և ինը անդամից բաղկացած ՏՏ-ներում: ՏՏ-ների եկամտի հիմնական աղբյուրներն էին պետական կամ համայնքային աշխատանքից, մասնավոր գործունեությունից կամ գյուղատնտեսությունից և կենսաթոշակներից կամ սոցիալական նպաստներից ստացված վարձատրությունը: | ոչ միայն ոռոգման ջրի պակասը, այլև պարարտանյութերի սահմանափակ հասանելիությունը, ինչը հաճախ պահանջում է Երևան մեկնել և սպառողական շուկաներ մուտք գործելու դժվարություններ: Մարդկանց մեծ մասը մշակում է իր սեփական հողամասերը: Մասնակիցները շեշտեցին, որ որքան շուտ կառուցվի ջրամբարը, այնքան լավ, քանի որ դա համայնքի համար վաղուց ի վեր անհրաժեշտություն է եղել: Միևնույն ժամանակ, նրանք մտահոգություն հայտնեցին գյուղատնտեսական վարկերի բարձր տոկոսադրույքների և իրենց արտադրանքի վաճառքի սահմանափակ շուկայի վերաբերյալ: Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի շարունակական շինարարությունը կապահովի արագընթաց կապ նոր շուկաների հետ: |
| ***Մեղրի համայնքի ղեկավարի հետ հարցազրույցը տեղի է ունեցել 03.04.2024 թվականին:*** Հարցազրույցի նպատակն էր քննարկել ոռոգման ոլորտում համայնքի վրա ազդող մարտահրավերները և հասկանալ նրանց ակնկալիքները Լիճքի ջրամբարի կառուցման Ծրագրի վերաբերյալ: Համայնքի ղեկավարի տեղակալը բացատրեց, որ Մեղրիի տարածաշրջանի բնակչությունը հիմնականում զբաղվում է մրգերի աճեցմամբ, որտեղ Մեղրիի թուզը, նուռը և խուրման լայնորեն ճանաչված են: Նա ընդգծեց, որ եթե ոռոգման ջուրը հասանելի լինի, բնակիչները լիովին կմշակեն իրենց հողերը: Գյուղատնտեսությունը համայնքում ապրուստի հիմնական աղբյուրն է, բնակչության մոտ 80%-ը զբաղվում է գյուղատնտեսությամբ: Հողատարածքների մեծ մասը մշակվում է սեփականատերերի կողմից, չնայած որոշները վարձակալված են: Մարդիկ ոգևորված են ջրամբարի կառուցման ծրագրով: Ընդհանուր ակնկալիքն այն է, որ Ծրագիրը հաջողությամբ կավարտվի, և բոլորը կունենան ջրի հասանելիություն: | | | | |
| **ԵԼՓԻՆԻ ՋՐԱՄԲԱՐ** | | | | |
| 25.03.2024 | Ելփին գյուղ | ՖԽՔ՝ կանայք | Մասնակիցներից մեկը 26-40 տարեկան էր և ստանում էր նպաստային փաթեթ, ապրում էր վեց անդամից բաղկացած տնային տնտեսությունում: Երկու մասնակից 41-60 տարեկան էին. նրանցից մեկը հաշմանդամություն ունեցող թոշակառու էր, ապրում էր երեք անդամից բաղկացած տնային | Մասնակիցները նշեցին, որ ոռոգման ջրի սահմանափակ լինելու պատճառով իրենք կարողանում են մշակել իրենց հողը միայն մասամբ: Սահմանի մոտ գտնվող վարելահողերը, ինչպես նաև այլ դաշտերն ու խոտհարքները, մեծամասամբ մնում են անմշակ: Նրանք նշեցին, որ ջրի խիստ սակավություն է, և բերքատու ծառերը, ինչպիսիք են խնձորենին և ընկույզը, շատ հազվադեպ են ջրվում՝ |

| Ամսաթիվ | Վայր | Ներգրավ-վածության տեսակ | Մասնակիցների պրոֆիլ | Քննարկվող թեմաներ |
|---|---|---|---|---|
| | | | տնտեսությունում: Չորրորդ մասնակիցը 61 տարեկանից բարձր էր, զբաղվում էր մասնավոր գործունեությամբ և ապրում էր միայնակ մեկ անդամից բաղկացած տնային տնտեսությունում: | մոտավորապես յուրաքանչյուր 40 օրը մեկ: Մասնակիցները հավելեցին, որ բավարար ոռոգման դեպքում մշակման պայմանները զգալիորեն կբարելավվեն՝ հնարավորություն տալով ստանալ բարձրորակ բերք և լիարժեք օգտագործել բոլոր հասանելի հողերը: Նրանք ակնկալում են, որ նոր ջրամբարը դրական ազդեցություն կունենա տնային տնտեսությունների կենսամակարդակի վրա, կբարձրացնի գյուղատնտեսական եկամուտները և կօգնի նվազեցնել աղքատությունը համայնքում: |
| 25.03.2024 | Ելփին գյուղ | ՖԽՔ՝ տղամարդիկ | Հարցված տնային տնտեսություններից մեկի ղեկավարը 26-40 տարեկան էր, մինչդեռ չորսի տարիքը 41-ից 60 էր: Մեկ տնային տնտեսության ղեկավարը 60 տարեկանից բարձր էր: Տնային տնտեսությունների չափերը տարբեր էին՝ մեկ տնային տնտեսությունն ուներ 2 անդամ, մեկը՝ 3 անդամ, մեկը՝ 5 անդամ և մեկը՝ 8 անդամ: | Մասնակիցները նշեցին, որ գյուղատնտեսությունը ներկայումս եկամտի հիմնական աղբյուրը չէ ջրի սակավության պատճառով: Նրանք նաև նկատեցին, որ գյուղի որոշ հողեր վարձակալված են, վարձակալները, հիմնականում տեղացի բնակիչները, մշակում են գարի և ցորեն, մինչդեռ հողամասերի մեծ մասը մշակվում է սեփականատերերի կողմից: Նրանք կանխատեսում են, որ ջրամբարի կառուցումից հետո մշակվող հողամասերի քանակը և մակերեսը կավելանան, ինչը կհանգեցնի եկամուտների աճի: Հողերի վարձակալության և վաճառքի աճ է սպասվում, և ավելի շատ մարդիկ կզբաղվեն գյուղատնտեսությամբ: Զարգացումը, հավանաբար, կխթանի կոոպերատիվների և ակտիվ գյուղացիների թվի աճը: |

***Ելփին բնակավայրի վարչական ղեկավարի հետ հարցազրույցը տեղի է ունեցել 25.03.2024 թվականին:*** Հարցազրույցների նպատակն էր քննարկել ոռոգման ոլորտում առկա խնդիրները, որոնք ազդում են բնակավայրերի վրա, և հասկանալ նրանց ակնկալիքները Ելփինի ջրամբարի կառուցման Ծրագրի վերաբերյալ: Ընդգծվեց, որ ոռոգման ջուրը հիմնականում օգտագործվում է անասնապահության և այգեգործության նպատակներով: Մայիսի վերջին ջրամատակարարումը սահմանափակվում է, իսկ ամռանը հաճախ ջուր ընդհանրապես չկա, ինչը լուրջ խնդիր է ստեղծում գյուղացիների համար: Ոռոգման ջրի բացակայությունը բացասաբար է անդրադառնում բերքի որակի վրա, ինչի արդյունքում բերքի մի մասը չի վաճառվում և եկամուտ չի ապահովվում: Արդյունքում, որոշ

| Ամսաթիվ | Վայր | Ներգրավ-վածության տեսակ | Մասնակիցների պրոֆիլ | Քննարկվող թեմաներ |
|---|---|---|---|---|
| բնակիչներ արտագաղթել են գյուղից՝ աշխատանք փնտրելու համար: Ներկայումս 25 տներում մշտական բնակիչներ չկան, չնայած որոշ սեփականատերեր սեզոնային վերադառնում են: Ջրի հասանելիության բարելավման հետ մեկտեղ, կանխատեսվում է, որ այս անհատներից շատերը կմնան գյուղում: | | | | |
| ***Հարցազրույց է անցկացվել նաև Ջրօգտագործողների Ընկերության (ՋՕԸ) Ելփինի բաժանմունքի ղեկավարի հետ:*** Նա նշեց, որ բնակավայրն ունի 210 ջրօգտագործող, որոնք կառավարում են ընդհանուր առմամբ 165 հեկտար ոռոգվող հողատարածք: Ոռոգման ջուրը մատակարարվում է մեկ կամ երկու պոմպերի միջոցով՝ ռոտացիոն հիմունքներով, ընդ որում՝ օգտատերերը երկու օր առաջ տեղեկացվում են իրենց հերթի մասին: Ջրի մեծ մասը հասնում է գիշերը, սակայն գիշերային ոռոգումը մարտահրավեր է, մասնավորապես անվտանգության տեսանկյունից: Գյուղի հողերը սահմանակից են Ադրբեջանին, և կա նաև արջերի վտանգ: Ոռոգման ջրի վճարումները կատարվում են հուսալիորեն: Ծրագրի իրականացումը կլուծի անվտանգության խնդիրները, քանի որ ջրի առկայության դեպքում գիշերային ոռոգման կարիք չի լինի: | | | | |
| **ՔԱՍԱԽԻ ՋՐԱՄԲԱՐ** | | | | |
| 26.03.2024 | Ոսկեվազ գյուղ | ՖԽՔ՝ կանայք | Մասնակիցների թվում էին ինը կին: Նրանց տարիքային բաշխումը հետևյալն էր. չորս կին 26-ից 40 տարեկան էին, երկուսը՝ 41-ից 60 տարեկան, իսկ երեքը՝ 61 տարեկանից բարձր: Միջին հաշվով, յուրաքանչյուր տնային տնտեսություն ուներ վեց անդամ: | Ֆոկուս-խումբ քննարկման մասնակիցները նշեցին, որ որոշ դեպքերում խմելու ջուրն օգտագործվում է ոռոգման համար: Օրինակ՝ որոշ ջերմոցներ օգտագործում են կաթիլային ոռոգման համակարգեր, որոնք աշխատում են խմելու ջրով: Նրանք ընդգծեցին, որ ոռոգման արժեքը շատ բարձր է. 5000 մ2 հողատարածքը ջրելու համար անհրաժեշտ է մոտ 50,000 դրամ, իսկ խաղողի այգիները սովորաբար ոռոգվում են միայն 40 օրը մեկ: Նրանք նաև նշեցին, որ մինչ որոշ տնային տնտեսություններ գյուղատնտեսական արտադրանք են արտադրում առևտրային նպատակներով, մյուսները մշակում են միայն իրենց կարիքների համար՝ ոռոգման ջրի բացակայության պատճառով:<br>Մասնակիցները կանխատեսում էին, որ ջրամբարի կառուցումը զգալիորեն կընդլայնի ոռոգելի գյուղատնտեսական հողատարածքները և կբարելավի տնային տնտեսությունների սոցիալ-տնտեսական վիճակը: |
| 26.03.2024 | Ոսկեվազ գյուղ | Հարցազրույց | Տնային տնտեսության ղեկավարը 41 տարեկանից բարձր է և ապրում է վեց անդամից բաղկացած ընտանիքում: Նրա | Նա մեծ հետաքրքրություն հայտնեց Ոսկեվազի պատմամշակութային հուշարձանների, մասնավորապես՝ ամրոցի պահպանման նկատմամբ: Նա |

| Ամսաթիվ | Վայր | Ներգրավ-վածության տեսակ | Մասնակիցների պրոֆիլ | Քննարկվող թեմաներ |
|---|---|---|---|---|
| | | | մասնագիտությունների մեջ են մտնում համայնքային ծառայությունը և գյուղատնտեսությունը, և նա մասնագիտորեն պատրաստված է որպես գյուղատնտես: Տնային տնտեսության եկամտի աղբյուրներն են աշխատավարձը, մասնավոր գործունեությունից և գյուղատնտեսությունից ստացված եկամուտները, ինչպես նաև կենսաթոշակը: | հատկապես մտահոգված էր այն հարցով, թե արդյոք ջրամբարի կառուցումը կարող է վնասել տարածաշրջանի հարուստ պատմամշակութային ժառանգությանը: Հետևաբար, անհրաժեշտ է Ոսկեվազ գյուղի պատմամշակութային արժեքների մանրակրկիտ ուսումնասիրություն: |
| ***Այգեշատ բնակավայրի վարչական ղեկավարի հետ հարցազրույցը տեղի է ունեցել 26.03.2024թ.:*** Նա ներկայացրեց ոռոգման համակարգի առկա խնդիրներն ու վիճակը՝ նշելով ջրի պակասը ամառային ամիսներին: Բոլոր հողատերերը մշակում են իրենց հողերը, սակայն չեն կարողանում լիարժեքորեն մշակել դրանք: Չնայած որ նրանք կարող են բերքահավաք կատարել տարին երկու անգամ, ջրի սակավությունը խոչընդոտում է դրան: Ջրամբարի կառուցումից ակնկալվում է, որ բոլոր հողատերերը կշահեն, ինչը կհանգեցնի տնային տնտեսությունների եկամուտների աճի և աղքատության մակարդակի նվազման: | | | | |
| ***Ոսկեվազ բնակավայրի վարչական ղեկավարի հետ հարցազրույցը տեղի է ունեցել 26.03.2024 թվականին:*** Ներկայումս ոռոգվող հողերի 90%-ը մշակվում է, թեև ոչ իրենց ողջ ներուժով, և բնակավայրում վարձակալված հողեր չկան: Ջրամբարի կառուցումը, կանխատեսումների համաձայն, կընդլայնի ոռոգման տարածքները՝ թույլ տալով մշակել ավելի շատ հողամասեր և թեթևացնելով գյուղացիների աշխատանքային ծանրաբեռնվածությունը: Հավանական է, որ ընդլայնվեն նաև խաղողի այգիները: 300 հա չոռոգվող հողերից մոտավորապես 50%-ը կարող է բարձր բերքատվություն ապահովել, եթե հասանելի լինի պատշաճ ոռոգում: | | | | |
| **ԱՐԹԻԿԻ ՋՐԱՄԲԱՐ** | | | | |
| Գարուն 2024 | Նոր Կյանք, Փանիկ, Անուշավան, Մեղրաշեն գյուղերը | ՖԽՔ | 4 ֆոկուս-խմբային քննարկումներ | ՖԽՔ-ներ են անցկացվել հինգ շահառու բնակավայրերից չորսում՝ Նոր Կյանքում, Փանիկում, Անուշավանում և Մեղրաշենում, որտեղ բնակիչները քննարկել են իրենց դերը որպես ոռոգման Ծրագրի ներկա կամ ապագա շահառուներ և շահագրգիռ կողմեր: Նպատակային հանդիպումներ են անցկացվել անմիջականորեն ազդակիր բնակիչների, մասնավորապես՝ Նոր Կյանքի և Փանիկի հողատերերի հետ, որոնց հողերում կտեղակայվեն հիմնական ջրատարները (ջրատարը և ոռոգման ջրանցքը):<br>Անուշավանում և Մեղրաշենում մասնակիցները, այդ թվում՝ |

| Ամսաթիվ | Վայր | Ներգրավ-վածության տեսակ | Մասնակիցների պրոֆիլ | Քննարկվող թեմաներ |
|---|---|---|---|---|
| | | | | տեղացի հողատերերը Ծրագրի ավարտից հետո կդառնան շահառուներ: Այս հանդիպումները արժեքավոր մտքեր, գաղափարներ և սպասումներ են տվել՝ այդպիսով ամրապնդելով համայնքի ներգրավվածությունը և տեղեկացնելով Ծրագրի իրականացման մասին: |

## 4.2 2024-2025 թվականների Սոցիալ-Տնտեսական Ուսումնասիրության Ընթացքում Շահառուների Ներգրավման Ամփոփում

2024 թվականի հուլիս-սեպտեմբեր ամիսներին Խորհրդատուն անցկացրել է շահառուների ներգրավման մի շարք խորհրդակցություններ՝ Ծրագրի ազդեցության ենթարկված համայնքների ղեկավարների, ազդակիր բնակավայրերի վարչական ղեկավարների և այն բնակիչների հետ, ովքեր կարող են կորցնել եկամուտ կամ գույք Ծրագրի իրականացման հետևանքով: Այս խորհրդակցությունները կազմել են ՇՄՍԱԳ-ի և ՏՇ-ի նպատակներով իրականացված սոցիալ-տնտեսական ուսումնասիրությունների մի մասը: Բացի այդ, 2025 թվականի օգոստոս-սեպտեմբեր ամիսներին անցկացվել են մի քանի առցանց հարցազրույցներ Արթիկ համայնքա-պետարանի ներկայացուցիչների հետ:

Վերոնշյալ ներգրավման գործողություններից առաջ Խորհրդատուն ներկայացրել է պաշտոնական նամակներ ազդակիր համայնքների՝ մասնավորապես Արենիի, Արթիկի, Մարտունու, Մեղրիի, Խոյի և Աշտարակի համայնքների ղեկավարներին, որոնցում ուրվագծվել են՝ (i) Ծրագիրը և դրա բաղադրիչները, (ii) Ծրագրի իրականացման գործընթացի ներկայիս վիճակը, (iii) շրջակա միջավայրի և սոցիալ-տնտեսական ուսումնասիրությունների շրջանակը և նպատակները, (iv) հողօգտագործման հնարավոր սահմանափակումները, հողի ձեռքբերումը և փոխհատուցման հարցերը, և (v) Ծրագրի ազդակիր անձանց (ԾԱԱ) խմբերի և պաշտոնյաների ցանկը, որոնց հետ պետք է անցկացվեն խարհրդակցություններ:

Բոլոր համայնքային վարչակազմերը, բացառությամբ Արթիկի, հայտնել են իրենց պատրաստա-կամությունը մասնակցելու ներգրավվածության խորհրդակցություններին/ հարցազրույցներին: Արթիկի դեպքում անցկացվել են առցանց հարցազրույցներ: Ներգրավման հանդիպումների և ծրագրի ազդակիր բնակիչների հետ մանրամասն հարցազրույցների ամփոփումը ներկայացված է **Աղյուսակ 3**-ում:

**Աղյուսակ 3. ՇՄԱԳ փուլի հանրային քննարկման միջոցառումների ամփոփումը**

| № | Ամսաթիվ | Վայր | Ներգրավվածության տեսակ | Հարցազրույցի մասնակիցներ |
|---|---|---|---|---|
| **1. ԼԻՃԿԻ ՋՐԱՄԲԱՐ** | | | | |
| 1.1 | 31.07.2024 | Մեղրիի համայնքապետարան | Խորհրդատվական հանդիպում | Մեղրի համայնքի ղեկավար և տեղակալներ, ժամուլի քարտուղար |
| 1.2 | 31.07.2024 | | Հարցազրույց | Քաղաքաշինության, հողօգտագործման և գույքի կառավարման բաժնի գլխավոր մասնագետ |

| № | Ամսաթիվ | Վայր | Ներգրավվածության տեսակ | Հարցազրույցի մասնակիցներ |
|---|---|---|---|---|
| 1.3 | 16.08.2024 | Լիճք գյուղական բնակավայր | Հարցազրույց | Լիճք գյուղական բնակավայրի վարչական ղեկավար |
| 1.4 | 28.08.2024 | | Հարցազրույց (3) | Լիճք գյուղի բնակիչներ (Ծրագրի կարիքների համար ձեռքբերվող տարածքում գտնվող պտղատու այգիների հողատերեր, ձեռքբերվող տարածքում գտնվող հողատարածքները վարելու և խոտհունձ անելու համար օգտագործող ֆերմերներ) |
| **2. ԵԼՓԻՆԻ ՋՐԱՄԲԱՐ** | | | | |
| 2.1 | 22.08.2024 | Արենի համայնքապետարան | Խորհրդատվական հանդիպում | Արենի համայնքի ղեկավար |
| 2.2 | 22.08.2024 | Ելփին գյուղական բնակավայր | Հարցազրույց | Ելփին գյուղի վարչական ղեկավար |
| **3. ԱՍՏՂԱՁՈՐԻ ՋՐԱՄԲԱՐ** | | | | |
| 3.1 | 07.08.2024 | Մարտունիի քաղաքապետարան | Խորհրդատվական հանդիպում | Մարտունի համայնքի ղեկավար և տեղակալ, աշխատակազմի քարտուղար, գյուղատնտեսության և բնության պահպանության բաժնի պետ |
| 3.2 | 07.08.2024 | | Հարցազրույց | Գյուղատնտեսության և բնության պահպանության բաժնի պետ |
| 3.3 | 07.08.2024 | Աստղաձոր գյուղական բնակավայր | Հարցազրույց | Աստղաձոր գյուղական բնակավայրի վարչական ղեկավար |
| 3.4 | 26.08.2024 | | Հարցազրույց (3) | Աստղաձոր գյուղի բնակիչներ (ձեռքբերվող տարածքում համայնքային հողերի ոչ ֆորմալ օգտագործող, մշակում են անասնապահական մշակաբույսեր և ազնվամորի, ձեռքբերվող տարածքում գտնվող հողերի սեփականատեր, զբաղվում է հերկով և խոտհունձով, անասնապահ, որը հաճախ անցնում է ջրամբարի տարածքով անասունների հետ՝ արոտավայրեր տանող ճանապարհին): |
| **4. ՔԱՍԱԽԻ ՋՐԱՄԲԱՐ** | | | | |
| 4.1 | 09.08.2024 | Խոյի համայնքապետարան | Խորհրդատվական հանդիպում | Խոյ համայնքի ղեկավար և տեղակալ, փորձագետ, Այգեշատ և Ամբերդ գյուղերի վարչական ղեկավարներ |
| 4.2 | 06.09.2024 | Աշտարակի քաղաքապետարան | Խորհրդատվական հանդիպում | Աշտարակ համայնքի աշխատակազմի ղեկավար, Աշտարակ համայնքի ղեկավարի տեղակալներ |
| 4.3 | 13.09.2024 | Աշտարակի քաղաքապետարան | Հարցազրույց (3) | Ոսկեվազ, Ոսկեհատ և Օշական գյուղերի վարչական ղեկավարներ |

| № | Ամսաթիվ | Վայր | Ներգրավվածության տեսակ | Հարցազրույցի մասնակիցներ |
|---|---|---|---|---|
| 4.4 | 13.09.2024 | Ոսկեվազ բնակավայր | Հարցազրույց (3) | Ոսկեվազ գյուղի բնակիչներ (ձեռքբերվող տարածքում գտնվող այգիների և կիսակառույց կառույցի սեփականատերեր, Ծրագրի տարածքի օգտագործող որպես արոտավայր) |
| 4.5 | 13.09.2024 | Ոսկեհատ բնակավայր | Հարցազրույց (3) | Ոսկեհատ գյուղի բնակիչներ (ձեռքբերվող տարածքում գտնվող այգիների սեփականատերեր) |
| 4.6 | 13.09.2024 | Օշական բնակավայր | Հարցազրույց | Օշական գյուղի բնակիչ (ձեռքբերվող տարածքում գտնվող այգու սեփականատեր) |
| **5. ԱՐԹԻԿԻ ՋՐԱՄԲԱՐ** | | | | |
| 5.1 | Օգոստոս-Հոկտեմբեր 2025 | Արթիկի քաղաքապետարան | Մի շարք առցանց հարցազրույցներ | Զարգացման ծրագրերի, տուրիզմի և արտաքին կապերի բաժնի ղեկավար և աշխատակիցներ, սոցիալական ծառայությունների ներկայացուցիչներ և այլն: |

Այս սոցիալ-տնտեսական ուսումնասիրության արդյունքները վերլուծվել և ներառվել են Ծրագիրը ՇՄՍԱԳ հաշվետվությունների և ՏԾ փաստաթղթի համապատասխան բաժիններում, իսկ հիմնական արդյունքները հետևյալն են՝

- Համայնքային վարչակազմերի տվյալներով՝ Ծրագիրը մեծ ակնկալիքով է սպասվում բոլոր համայնքների բնակչության կողմից, քանի որ ոռոգման ջրի պակասը լուրջ խնդիր է:
- Համայնքային վարչակազմերը հայտնել են իրենց պատրաստակամությունը աջակցելու Ծրագրին ինչպես նախապատրաստական/նախագծային ուսումնասիրության, այնպես էլ իրականացման փուլերում:
- Որոշ համայնքային վարչակազմեր նշել են, որ ջրամբարների կառուցման հարցը քննարկվել է տարիներ շարունակ, և լավ կլինի, որ այն վերջապես իրականացվի: Նրանք նաև նշել են մեխանիկական ջրամատակարարումից ինքնահոս ջրամատակարարման անցնելու կարևորությունը:
- Ակնկալվում է, որ Ծրագիրը զգալի օգուտներ կբերի ջրամբարներից ի վար գտնվող համայնքների գյուղատնտեսության զարգացմանը և բարեկեցությանը: Որոշ հարցվածներ նաև նշել են, որ ջրամբարները կարող են լինել զբոսաշրջային տեսարժան վայրեր:
- Այնուամենայնիվ, որոշ մասնակիցներ մտահոգություններ են հայտնել հողերի ձեռքբերման հարցերի, բերքի և հողօգտագործման հաշվարկման մեթոդաբանության և փոխհատուցման մեխանիզմի վերաբերյալ: Ոմանք նշել են, որ կնախընտրեին գնել այլընտրանքային հողամասեր և շարունակել իրենց ապրելակերպը հողի մշակմամբ:

# 5. Շահառուների Նույնականացում և Վերլուծություն

Համաձայն ՎԶԵԲ-ի ԲՍՔ ԻՊ10-ի, շահառուները սահմանվում են որպես տարբեր անհատներ կամ խմբեր, որոնք.

i) ազդակիր են կամ կարող են լինել ազդակիր (ուղիղ կամ անուղղակի) Ծրագրի կողմից (ազդակիր կողմեր), կամ

ii) կարող են շահագրգռվածություն ունենալ Ծրագրում (այլ շահառուներ):

## 5.1 Շահառուների Նույնականացման Մեթոդաբանություն

Ծրագրին առնչվող շահառուների նույնականացումը կատարվել է հետևյալ չափանիշների համաձայն՝

- **Ազդեցություն**. Ծրագրի իրականացումը կարող է էականորեն ազդել որոշակի սոցիալական խմբի (շահառուների) վրա,
- **Ներգործություն**. սոցիալական խումբը կարող է ունենալ Ծրագրի իրականացման գործընթացին էականորեն ազդելու կարողություն,
- **Գործընկերություն**. առկա են հնարավորություններ Ծրագրի պատվիրատուի և որոշ սոցիալական խմբերի միջև գործընկերային հարաբերություններ կառուցելու համար, և
- **Արտահայտված հետաքրքրություն**. Ծրագրից անմիջականորեն չազդվող սոցիալական խումբը կամ անհատները կարող են (կամ չեն կարող) հետաքրքրություն ցուցաբերել դրա նկատմամբ:

Շահառուների ներգրավումը պահանջում է դրանց նույնականացում՝ հաշվի առնելով վերը նշված չափանիշները, և նրանց հետ ներգրավման համար համապատասխան մեթոդների ընտրություն:

## 5.2 Հիմնական Շահառուների Կատեգորիաներ և Խմբեր

Ծրագրի շահառուների վերլուծության նպատակով դրանք խմբավորվում են հետևյալ երկու հիմնական կատեգորիաների.

- **Ներքին շահառուներ**, ներկայացնում են Ծրագրի իրականացմանը մասնակցող ընկերություններին, դրանց ղեկավարությանը, անձնակազմին և բաժնետերերին, ինչպես նաև Ծրագրում ներգրավված և դրա իրականացումից օգուտ ստացող կապալառուներին ու ենթակապալառուներին (ներդրողներ, բաժնետերեր), և
- **Արտաքին շահառուներ**, ներկայացնում են խմբերին կամ անհատներին, որոնք ներգրաված չեն Ծրագրում որպես Պատվիրատուի աշխատակիցներ, կապալառուներ և ենթակապալառուներ, ինչպես նաև Ծրագրի հաստատման գործընթացում ներգրավված (ներգրավվող) մարմիններին, Ծրագրի ազդակիր տեղական բնակչությանը և շահագրգիռ հանրությանը:

Արդյունավետ և բովանդակալից ներգրավվածությունն ապահովելու համար, Ծրագրի արտաքին շահառուները ՎԶԵԲ ԻՊ10-ի համաձայն խմբավորվել են հետևյալ կերպով.

- Հնարավոր ազդակիր կողմեր,
- Հնարավոր խոցելի խմբեր,
- Պետական մարմիններ,
- Մարզային վարչակազմեր,
- Տեղական ինքնակառավարման մարմիններ, այդ թվում՝ համայնքներ և բնակավայրեր,
- Այլ շահառուներ (ՀԿ-ներ, զանգվածային լրատվամիջոցներ, ակադեմիական հաստատություններ, բիզնես և այլն):

## 5.3 Շահառուների Վերլուծություն

Արտաքին շահառուների խմբերի ցանկը և նրանց կապը Ծրագրի հետ և/կամ հետաքրքրությունը, որոնք որոշվել են Գլուխ 4-ում նկարագրված գրասենյակային ուսումնասիրության, հանդիպումների և խորհրդակցությունների հիման վրա, ներկայացված են Աղյուսակ 4-ում: Այս ցանկի հիման վրա Պատվիրատուն կմշակի և կթարմացնի շահառուների գրանցամատյանը՝

դրանց անուններով, պաշտոններով և կոնտակտային տվյալներով: Այս տեղեկատվությունը կմնա գաղտնի և կիավաքագրվի ու կպահպանվի միայն շահառուների համաձայնությամբ և Ծրագրի վերաբերյալ տեղեկատվություն ստանալու նպատակով:

***Ցանկացած շահառու, որը չի ներառված ստորև բերված աղյուսակում, բայց ցանկանում է ստանալ տեղեկատվություն Ծրագրի և դրա Բնապահպանական և սոցիալական ասպեկտների ու ազդեցությունների մասին, կարող է դիմել Պատվիրատուին (տե՛ս կոնտակտային տվյալները Գլուխ 7-ում)՝ շահառուների գրանցամատյանում ընդգրկվելու խնդրանքով:***

**Աղյուսակ 4. Արտաքին շահառուները, նրանց կապը/հետաքրքրությունները Ծրագրի նկատմամբ և ներգրավման մեթոդները**

| Շահառուների խմբեր | Հետաքրքրություններ / Հարաբերություններ | Հաղորդակցման գործիքներ |
|---|---|---|
| ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԱԿԻՐ ԿՈՂՄԵՐ | | |
| Ջրամբարների ոռոգվող տարածքներում գտնվող բնակավայրերում գյուղատնտեսական հողերի սեփականատերերը և օգտագործողները՝<br>- **Արթիկի ջրամբար**<br>*Նոր Կյանք, Վարդաքար, Փանիկ, Մեղրաշեն, Անուշավան բնակավայրեր*<br>- **Աստղաձորի ջրամբար**<br>*Աստղաձոր, Զոլաքար, Վաղաշեն և Մարտունի բնակավայրերի որոշ հատվածներ*<br>- **Քասախի ջրամբար**<br>*Ամբերդ, Լեռամերձ, Արագած, Աղավնատուն, Ֆերիկ, Ծաղկալանջ, Արշալույս, Ակնալիճ, Հայթաղ, Գեղակերտ, Հովտամեջ, Ճիածան, Դողս, Ծաղկունք, Այգեշատ, Մրգաստան, Շահումյան, Էջմիածին, Արտիմետ, Խորոնք և Գրիբոյեդով բնակավայրեր*<br>- **Լիճքի ջրամբար**<br>*Ագարակ, Ալվանք, Կարճեւան, Լեհվազ, Մեղրի, Նռնաձոր, Շվանիձոր և Վարդանիձոր բնակավայրեր*<br>- **Ելփինի ջրամբար**<br>*Ելփին և Չիվա բնակավայրեր* | Կարող են հետաքրքրված լինել՝<br>• նախկինում չոռոգվող գյուղատնտեսական հողերի մշակման համար ոռոգման ջրի հասանելիությունից,<br>• ժամանակակից ոռոգման տեխնիկայի և տեխնոլոգիաների ներդրումից,<br>• գյուղատնտեսական կոոպերատիվների ստեղծումից: | • Հանրային հանդիպումներ<br>• Ֆոկուս խմբերի քննարկումներ<br>• Գրավոր տեղեկատվության հրապարակում<br>• Հաղորդակցություն զանգվածային լրատվամիջոցների հետ<br>• Համայնքի հետ կապ<br>• Հատուկ նշանակության միջոցառումներ (հանդիպումներ)<br>• Անհատական հանդիպումներ<br>• Բողոքարկման մեխանիզմ |
| Գյուղացիներ և հողերի ու գույքի սեփականատերեր կամ օգտագործողներ, որոնց սեփականությունը կարող է ընկնել նախատեսված ջրամբարների և դրանց հետ կապված ենթակառուցվածքների համար նախատեսված | **Կարող են ազդակիր լինել՝**<br>• հողերի ժամանակավոր/մշտական օտարումից և գույքի կորստից,<br>• մուտքի (շինարարություն և շահագործում) և հողօգտագործման | • Հանրային հանդիպումներ<br>• Ֆոկուս խմբերի քննարկումներ<br>• Գրավոր տեղեկատվության հրապարակում |

| Շահառուների խմբեր | Հետաքրքրություններ / Հարաբերություններ | Հաղորդակցման գործիքներ |
|---|---|---|
| տարածքների, ինչպես նաև այլ վայրերի սահմաններում, որոնք դեռևս հաստատված չեն (օրինակ՝ թափոնների հեռացման տարածքներ, հողի բերրի շերտի պահեստավորման տարածքներ, քարհանքեր և այլն), ինչպես նաև նրանք, ովքեր կարող են տուժել հողօգտագործման սահմանափակումներից ջրամբարների շահագործման ընթացքում՝<br>- **Արթիկի ջրամբար**<br>*Անուշավան, Արթիկ, Նոր Կյանք, Փանիկ, Պեմզաշեն և Տուֆաշեն բնակավայրերը*<br>- **Աստղաձորի ջրամբար**<br>*Աստղաձոր և Զոլաքար բնակավայրեր*<br>- **Քասախի ջրամբար**<br>*Ամբերդ, Այգեշատ, Օշական, Ոսկեհատ և Ոսկեվազ բնակավայրերը*<br>- **Լիճքի ջրամբար**<br>*Լիճք բնակավայր*<br>- **Ելփինի ջրամբար**<br>*Ելփին բնակավայր* | սահմանափակումներից (շահագործման փուլ),<br>• բերքի/եկամտի կորստից,<br>• աղմուկից և մթնոլորտային արտանետումներից,<br>• համայնքային և մոտեցման ճանապարհների երկայնքով երթևեկության խտության աճից,<br>• ճանապարհատրանսպորտային պատահարներից և միջադեպերից,<br>**Կարող են հետաքրքրված լինել՝**<br>• ակտիվների (հող և մշակաբույսեր) փոխհատուցման գնահատումներով և վճարումներով,<br>• իրավաբանական խորհրդատվությամբ և աջակցությամբ հողի ձեռքբերման գործընթացում,<br>• Ծրագրի, դրա ընթացքի և շրջակա միջավայրի և սոցիալական ազդեցության մասին տեղեկատվությամբ,<br>• բողոքարկման մեխանիզմների միջոցով մտահոգություններ բարձրացնելու և հետադարձ կապ տրամադրելու հնարավորություններով: | • Հաղորդակցություն զանգվածային լրատվամիջոցների հետ<br>• Համայնքի հետ կապ<br>• Հատուկ նշանակության միջոցառումներ (հանդիպումներ)<br>• Անհատական հանդիպումներ<br>• Տարաբնակեցման պլանում ներգրավման գործողություններ<br>• Բողոքարկման մեխանիզմ |
| Բնակավայրերի բնակիչներ, որոնց վարչական սահմաններում կառուցվելու են ջրամբարները, այդ թվում՝<br>- **Արթիկի ջրամբար**<br>*Անուշավան, Արթիկ, Նոր Կյանք, Փանիկ, Պեմզաշեն և Տուֆաշեն բնակավայրերը*<br>- **Աստղաձորի ջրամբար**<br>*Աստղաձոր և Զոլաքար բնակավայրեր*<br>- **Քասախի ջրամբար**<br>*Ամբերդ, Այգեշատ, Օշական, Ոսկեհատ և Ոսկեվազ բնակավայրերը*<br>- **Լիճքի ջրամբար**<br>*Լիճք բնակավայր*<br>- **Ելփինի ջրամբար**<br>*Ելփին բնակավայր* | **Կարող են ազդակիր լինել՝**<br>• աղմուկից և մթնոլորտային արտանետումներից,<br>• համայնքային և մոտեցման ճանապարհների երկայնքով երթևեկության խտության աճից,<br>• ճանապարհատրանսպորտային պատահարներից և միջադեպերից,<br>• աղտոտվածությունից և թափոնների հեռացումից,<br>• Սեռական բռնության հետ կապված ռիսկերից,<br>**Կարող են հետաքրքրված լինել՝**<br>• զբաղվածության հնարավորություններով,<br>• այն տնտեսական հնարավորություններից, որոնք Ծրագիրը կարող է բերել բնակավայրեր,<br>• Ծրագրի, դրա ընթացքի և շրջակա միջավայրի և սոցիալական | • Հանրային հանդիպումներ<br>• Ֆոկուս խմբերի քննարկումներ<br>• Գրավոր տեղեկատվության հրապարակում<br>• Հաղորդակցություն զանգվածային լրատվամիջոցների հետ<br>• Համայնքի հետ կապ և ներգրավվածություն<br>• Հատուկ նշանակության միջոցառումներ (հանդիպումներ)<br>• Անհատական հանդիպումներ<br>• Բողոքարկման մեխանիզմ |

| Շահառուների խմբեր | Հետաքրքրություններ / Հարաբերություններ | Հաղորդակցման գործիքներ |
|---|---|---|
| | ազդեցության մասին տեղեկատվությամբ,<br>• բողոքարկման մեխանիզմների միջոցով մտահոգություններ բարձրացնելու և հետադարձ կապ տրամադրելու հնարավորություններով: | |
| Ջրամբարների տարածք մոտեցման ճանապարհների երկայնքով տեղակայված տեղական բիզնեսները, հիմնականում խանութները, սրճարանները, ծառայություն մատուցողները, վառելիքի լիցքավորման կայանները, փոքր հյուրանոցները և հյուրատները, ինչպես նաև դրանց աշխատակիցները: | **Կարող են ազդակիր լինել՝**<br>• շինարարական աշխատանքների պատճառով մուտքի սահմանափակումներից,<br>• համայնքային և մոտեցման ճանապարհների երկայնքով երթևեկության խտության աճից:<br>**Կարող են հետաքրքրված լինել՝**<br>• Ծրագրի, դրա ընթացքի և շրջակա միջավայրի և սոցիալական ազդեցության մասին տեղեկատվությամբ,<br>• Ծրագրից բխող մատակարարումների հնարավորություններով,<br>• կացարանի և սննդի ծառայությունների մատուցմամբ,<br>• զբաղվածության և մատակարարումներին մասնակցության հնարավորություններով: | • Հանրային հանդիպումներ<br>• Անհատական հանդիպումներ<br>• Գրավոր տեղեկատվության հրապարակում<br>• Բողոքների կառավարում |
| Հանրային ենթակառուցվածքների օպերատորները (օրինակ՝ գազի և էլեկտրաէներգիայի մատակարարները) և ջրամբարների և դրանց հետ կապված բաղադրիչների կառուցման համար նախատեսված տարածքներում գտնվող փոքր հիդրոէլեկտրակայանների (ՀԷԿ) սեփականատերերը, կամ նրանք, ովքեր կարող են տուժել շինարարական գործունեությունից, ինչպես նաև նրանց աշխատակիցները: | **Կարող են ազդակիր լինել՝**<br>• ջրամբարների կառուցման համար նախատեսված տարածքներում ներկայումս գտնվող ենթակառուցվածքների տեղափոխումից,<br>• եկամտի կորստից՝ ենթակառուցվածքների շահագործման և (ՀԷԿ-երի) գործունեության ժամանակավոր դադարեցման պատճառով,<br>**Կարող են հետաքրքրված լինել՝**<br>• Ծրագրի, դրա ընթացքի և շրջակա միջավայրի և սոցիալական ազդեցության մասին տեղեկատվությամբ,<br>• ջրամբարների և օժանդակ բաղադրիչների համար էլեկտրաէներգիայի մատակարարման ենթակառուցվածքների կառուցմամբ: | • Անհատական հանդիպումներ<br>• Սեմինարներ<br>• Գրավոր տեղեկատվության հրապարակում<br>• Նամակներ / Էլ. նամակներ / զանգեր |
| Ծրագրի ջրամբարներից ներքև գտնվող ջրային կենսամիջավայրի | **Կարող են ազդակիր լինել՝** | • Հանրային հանդիպումներ |

| Շահառուների խմբեր | Հետաքրքրություններ / Հարաբերություններ | Հաղորդակցման գործիքներ |
|---|---|---|
| կորստից կամ փոփոխությունից, ազդակիր ձկնորսներ (հատկապես առդի է Քասախի ջրամբարի համար): | • սնուցող գետերում ձկնորսության հնարավորությունների կրճատումից,<br>**Կարող են հետաքրքրված լինել՝**<br>• ջրամբարների կողմից առաջարկվող ձկնորսական հնարավորություններով: | • Ծանուցումներ սոցիալական հաստատություններում<br>• Անհատական հանդիպումներ<br>• Գրավոր տեղեկատվության հրապարակում<br>• Բողոքարկման մեխանիզմ |
| Անհատներ, ովքեր ներկայումս օգտագործում են Աստղաձորի, Լիճքի և Ելփինի ջրամբարների կառուցման համար նախատեսված տարածքները հանգստի կամ այլ նպատակներով: | **Կարող են ազդակիր լինել՝**<br>• հանգստի գոտիների ժամանակավոր կորստից,<br>**Կարող են հետաքրքրված լինել՝**<br>• ջրամբարի շուրջ նոր հանգստի գոտիների զարգացմամբ՝ բարելավված գեղատեսիլ լանդշաֆտով: | • Հանրային հանդիպումներ<br>• Ծանուցումներ սոցիալական հաստատություններում<br>• Անհատական հանդիպումներ<br>• Գրավոր տեղեկատվության հրապարակում<br>• Բողոքարկման մեխանիզմ |
| Շինարարական հրապարակներում կամ դրանց մոտակայքում գտնվող եկեղեցիներ, գերեզմանատներ, սրբավայրեր և այլ սոցիալական կամ կրոնական կառույցներ, ինչպես նաև դրանց օգտագործողներ, ներառյալ հոգևորականները և մշակութային ժառանգության հուշարձանների կամ եկեղեցիների պահապանները: | **Կարող են ազդակիր լինել՝**<br>• Ծրագրի իրականացման պատճառով մուտքի սահմանափակումից,<br>• Ծրագրի անմիջական ազդեցության գոտում գտնվող մշակութային ժառանգության միավորների տեղափոխումից,<br>**Կարող են հետաքրքրված լինել՝**<br>• Ծրագրի և դրա ընթացքի մասին տեղեկատվությամբ: | • Հանրային հանդիպումներ<br>• Ծանուցումներ սոցիալական հաստատություններում<br>• Անհատական հանդիպումներ<br>• Գրավոր տեղեկատվության հրապարակում<br>• Բողոքարկման մեխանիզմ |
| ՀԱՎԱՆԱԿԱՆ ԽՈՑԵԼԻ ԽՄԲԵՐ | | |
| Աղքատության շեմից ցածր ապրող գրանցված ընտանիքներ, թոշակառուների գլխավորությամբ և աջակցություն չստացող ընտանիքներ, միայնակ ծնողով ընտանիքներ, աշխատող չափահասներ չունեցող կանանց գլխավորությամբ ընտանիքներ, բազմազավակ ընտանիքներ, ֆիզիկական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձինք: | **Հավանական է ազդակիր լինեն՝**<br>• Ծրագրի գործունեության, ազդեցություններից, այդ թվում՝ ՏՊ-ի իրականացման և մեղմացնող միջոցառումների վերաբերյալ տեղեկատվության սահմանափակ հասանելիությունից,<br>**Կարող են հետաքրքրված լինել՝**<br>• Ծրագրի, դրա ընթացքի և շրջակա միջավայրի և սոցիալական ազդեցության և օգուտների մասին տեղեկատվությամբ,<br>• տեղեկատվության հասանելիությունով և ՏՊ իրավունքներից օգտվելու հատուկ | • Հանրային հանդիպումներ<br>• Հատուկ նշանակության միջոցառումներ (հանդիպումներ)<br>• Անհատական հանդիպումներ<br>• Գրավոր տեղեկատվության հրապարակում<br>• Խորհրդատվական աջակցություն |

| Շահառուների խմբեր | Հետաքրքրություններ / Հարաբերություններ | Հաղորդակցման գործիքներ |
|---|---|---|
| | օգնությամբ (միայն տարաբնակեցման ազդակիրների համար), զբաղվածության հնարավորություններով,<br>• բողոքարկման մեխանիզմով: | • Հատուկ օգնություն խոցելի խմբերի համար՝ ՏՊ-ում<br>• Բողոքարկման մեխանիզմ |
| Ջրամբարներին մոտ գտնվող ազդակիր բնակավայրերում ապրող երեխաներ (ջրամբարների մոտ) | **Հավանական է ազդակիր լինեն՝**<br>• շինհրապարակներ չարտոնված մուտքից,<br>• ճանապարհատրանսպորտային պատահարներից,<br>• շահագործվող ջրամբարներ և սնուցման/ոռոգման ջրանցքներ չարտոնված մուտքից: | • Կենտրոնացված հանդիպումներ դպրոցներում<br>• Հանրային հանդիպումներ<br>• Գրավոր տեղեկատվության հրապարակում |
| ՊԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ | | |
| Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը (ՏԿԵՆ) և դրա ստորաբաժանումները: | ՏԿԵՆ-ը մշակում և իրականացնում է պետական քաղաքականությունը, որը վերաբերում է պետական ջրային համակարգերի կառավարմանը և անվտանգ շահագործմանը, ի թիվս այլ պարտականությունների: | • Սեմինարներ<br>• Հանրային հանդիպումներ<br>• Մասնավոր հանդիպումներ<br>• Գրավոր տեղեկատվության հրապարակում<br>• Էլ. նամակներ / նամակներ / հեռախոսազանգեր |
| - ՏԿԵՆ ենթակա Ջրային կոմիտե<br>- Ծրագրի Իրագործման Գործակալություն (ԾԻԳ) | **Ներգրավված են՝**<br>• ջրային ոլորտում պետական քաղաքականության մշակմանը և իրականացմանը,<br>• ջրային համակարգերի ներդրումային քաղաքականության մշակմանը և իրականացմանը,<br>• ջրային ոլորտի ծրագրերի նախաձեռնմանը և կառավարմանը,<br>**Կարող են հետաքրքրված լինել՝**<br>• Ծրագրի հաջող իրականացմամբ և մշտադիտարկումով: | • Սեմինարներ<br>• Հանրային հանդիպումներ<br>• Մասնավոր հանդիպումներ<br>• Գրավոր տեղեկատվության հրապարակում<br>• Էլ. նամակներ / նամակներ / հեռախոսազանգեր |
| Ջրօգտագործողների Ընկերություններ | **Ներգրավված են՝**<br>• գյուղական բնակավայրերին ոռոգման ջրի ապահովմանը,<br>**Կարող են հետաքրքրված լինել՝**<br>• ոռոգման կարիքները բավարարելու համար մատակարարվող ջրի ծավալի ավելացմամբ: | • Սեմինարներ<br>• Հանրային հանդիպումներ<br>• Մասնավոր հանդիպումներ<br>• Գրավոր տեղեկատվության հրապարակում<br>• Էլ. նամակներ / նամակներ / հեռախոսազանգեր |

| Շահառուների խմբեր | Հետաքրքրություններ / Հարաբերություններ | Հաղորդակցման գործիքներ |
|---|---|---|
| | | • Բողոքարկման մեխանիզմ |
| Ջրային կոմիտեին կից Ջրային Համակարգերի Օգտագործման և Պահպանության Տեխնիկական Հանձնաժողով | **Ներգրավված է՝**<br>• հիդրոտեխնիկական կառույցների վերահսկողությանը և տեխնիկական զննմանը,<br>• ջրային համակարգերի անվտանգության, անխափան և արդյունավետ շահագործման և պահպանման ապահովման ուսումնասիրություններին, իրականացվող միջոցառումների վերլուծությանը և մասնագիտական եզրակացությունների տրամադրմանը: | • Սեմինարներ<br>• Հանրային հանդիպումներ<br>• Մասնավոր հանդիպումներ<br>• Գրավոր տեղեկատվության հրապարակում<br>• Էլ. նամակներ / նամակներ / հեռախոսազանգեր |
| Շրջակա միջավայրի նախարարությունը (ՇՄՆ) և դրա ստորաբաժանումները՝<br>- «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության կենտրոն» ՊՈԱԿ[12] | ՇՄՆ-ը ապահովում է շրջակա միջավայրի պաշտպանությունը և բնական պաշարների ռացիոնալ օգտագործումը: ՇՄՆ-ը, իր առանցքային բաժինների միջոցով, ունի վարչական լիազորություններ ծրագրերի հաստատման գործընթացների նկատմամբ՝ շրջակա միջավայրի պաշտպանության օրենսդրությանը համապատասխան, ներառյալ ջրային ոլորտի ծրագրերի և գործունեության պետական փորձաքննությունները: | • Սեմինարներ<br>• Հանրային հանդիպումներ<br>• Մասնավոր հանդիպումներ<br>• Գրավոր տեղեկատվության հրապարակում<br>• Էլ. նամակներ / նամակներ / հեռախոսազանգեր |
| - «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ը, որը պատասխանատու է «Արևիկ» ազգային պարկի կառավարման համար,<br>- «Սևան» ազգային պարկ ՊՈԱԿ-ը, որը պատասխանատու է Սևանա լճի կառավարման համար: | **Կարող են հետաքրքրված լինել՝**<br>• կենսաբազմազանության պահպանությունով, ներառյալ պաշտպանված բուսական և կենդանական աշխարհը,<br>• ազգային պահպանվող տարածքներով և միջազգայնորեն ճանաչված բնության տարածքներով: | • Սեմինարներ<br>• Հանրային հանդիպումներ<br>• Գրավոր տեղեկատվության հրապարակում<br>• Էլեկտրոնային նամակներ / նամակներ / հեռախոսազանգեր<br>• Բողոքարկման մեխանիզմ |
| Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն (ԿԳՄՍՆ):<br>- Պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության վարչություն | **Կարող են հետաքրքրված լինել՝**<br>• Հայաստանի պատմա-մշակութային վայրերի պահպանությամբ,<br>• տեղական պատմական և մշակութային վայրերի վրա ազդեցության կանխարգելմամբ,<br>**Ներգրավված են՝** | • Սեմինարներ<br>• Հանրային հանդիպումներ<br>• Գրավոր տեղեկատվության հրապարակում<br>• Էլ. նամակներ / նամակներ / հեռախոսազանգեր |

[12] ՊՈԱԿ - Պետական ոչ առևտրային կազմակերպություն

| Շահառուների խմբեր | Հետաքրքրություններ / Հարաբերություններ | Հաղորդակցման գործիքներ |
|---|---|---|
| | • ՇՄԱԳ-ի և շինարարության թույլտվությունների գործընթացներին, ներառյալ մանրամասն հնագիտական ուսումնասիրությունների թույլտվությունների տրամադրման գործընթացին,<br>• Ծրագրի շինարարության ընթացքում հնարավոր պատահական գտածոների կառավարման հարցերին: | |
| Առողջապահության նախարարություն (ԱՆ) | Ծրագրի հանրային առողջության և անվտանգության վրա հնարավոր ազդեցության վերանայման առումով հիմնական շահառուներից մեկը: | • Հանրային հանդիպումներ<br>• Գրավոր տեղեկատվության հրապարակում |
| Կադաստրի կոմիտե | **Ներգրավված է՝**<br>• անշարժ գույքի պետական գրանցամատյանի պահպանմանը, նպաստում է հողային քաղաքականության մշակմանը և իրականացմանը: Հողերի ձեռքբերման հետ կապված կարևոր է Կոմիտեի հետ համագործակցությունը: | • Խորհրդակցական հանդիպումներ<br>• Էլ. նամակներ / նամակներ / հեռախոսազանգեր |
| Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին | **Ներգրավված է՝**<br>• շինարարության և շահագործման փուլերում Ծրագրի ՇՄԱԳ եզրակացությունների պարտադիր դրույթների կատարման մշտադիտարկմանը,<br>• Ծրագրի իրականացման շրջանակներում շրջակա միջավայրի և ջրօգտագործման օրենսդրության կիրառման վերահսկողությանը: | • Տեսչական այցելություններ<br>• Տեղեկատվութան հրապարակում<br>• Էլ. նամակներ / նամակներ / հեռախոսազանգեր |
| Ներքին գործերի նախարարություն (ՆԳՆ)՝<br>- ՀՀ ոստիկանություն ՆԳՆ-ի ենթակայության տակ | **Կարող են հետաքրքրված լինել՝**<br>• ճանապարհային անվտանգության պահպանմամբ և վթարների ու հանցագործությունների թվի կրճատմամբ,<br>• Ծրագրի երթևեկության կառավարման ծրագրերի վերանայմամբ և առաջարկությունների ներկայացմամբ: | • Խորհրդատվական հանդիպումներ<br>• Գրավոր տեղեկատվության հրապարակում<br>• Էլ. նամակներ / նամակներ / հեռախոսազանգեր |
| ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆՆԵՐ | | |
| Արագածոտնի, Գեղարքունիքի, Շիրակի, Սյունիքի և Վայոց ձորի մարզպետարաններ, այդ թվում՝<br>- Քաղաքաշինության, հողերի զարգացման և | Տարածաշրջանային մակարդակում իրականացվող միջոցառումների վերաբերյալ խորհրդակցությունների **հիմնական շահառուներ**: | • Սեմինարներ<br>• Հանրային հանդիպումներ |

| Շահառուների խմբեր | Հետաքրքրություններ / Հարաբերություններ | Հաղորդակցման գործիքներ |
|---|---|---|
| ենթակառուցվածքների կառավարման վարչություն<br>- Գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պաշտպանության վարչություն<br>- Զարգացման ծրագրերի իրականացման վարչություն: | • տարածաշրջանային վարչակազմերը իրականացնում են ստուգման, գույքագրման և գնահատման գործունեություն, ինչպես նաև վերահսկում և մշտադիտարկում են Ծրագրի առաջընթացը և դրա ազդեցությունը տարածաշրջանի վրա՝ տարբեր մակարդակներում:<br>**Կարող են հետաքրքրված լինել՝**<br>• տարածաշրջանային և համայնքային մակարդակներում սոցիալ-տնտեսական զարգացմամբ,<br>• մարզերում ոռոգվող գյուղատնտեսական հողերի տարածքների ընդլայնմամբ: | • Գրավոր տեղեկատվության հրապարակում<br>• Էլ. նամակներ / նամակներ / հեռախոսազանգեր |
| ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ | | |
| - **Արթիկի ջրամբար**<br>Արթիկի համայնքապետարան և Անուշավան, Արթիկ, Նոր Կյանք, Փանիկ, Պեմզաշեն և Տուֆաշեն բնակավայրերի վարչական ղեկավարներ<br>- **Աստղաձորի ջրամբար**<br>Մարտունիի համայնքապետարանև Աստղաձոր ու Ձոլաքար բնակավայրերի վարչական ղեկավարներ<br>- **Քասախի ջրամբար**<br>Խոյի համայնքապետարան և Ամբերդ ու Այգեշատ բնակավայրերի վարչական ղեկավարներ<br>Աշտարակի համայնքապետարան և Օշական, Ոսկեհատ և Ոսկեվազ բնակավայրերի վարչական ղեկավարներ<br>- **Լիճքի ջրամբար**<br>Մեղրիի համայնքապետարան և Լիճք բնակավայրի վարչական ղեկավար<br>- **Ելփինի ջրամբար**<br>Արենիի համայնքապետարան և Ելփին բնակավայրի վարչական ղեկավար | **Համայնքների ղեկավարներ**<br>• կներգրավվեն ազդակիր բնակչության հետ անմիջականորեն աշխատանքներին՝ բնակիչներին հաղորդելով Ծրագրի նպատակները, կազմակերպելով հանրային լսումներ և տեղեկատվության հրապարակում, հավաքելով բնակիչների մտահոգություններն ու առաջարկությունները և օգնելով կանխել կամ մեղմել թյուրըմբռնումները,<br>• տիրապետում են բնակչության, հողօգտագործման կարգավիճակի և տնային տնտեսությունների սոցիալական և տնտեսական պայմանների վերաբերյալ տվյալներին,<br>• ակնկալում են համայնքի սոցիալ-տնտեսական պայմանների բարելավում,<br>• հետաքրքրված են հասկանալու Ծրագրի հնարավոր դրական և բացասական բնապահպանական ու սոցիալական ազդեցությունները,<br>• հետաքրքրված են փոխհատուցող ծառատունկերի միջոցով կանաչ տարածքների ստեղծմամբ և հողային հանույթի համայնքային նպատակներով օգտագործման հնարավորությամբ, | • Համատեղ այցելություններ<br>• Հանրային հանդիպումներ<br>• Մասնավոր հանդիպումներ<br>• Էլեկտրոնային նամակներ<br>• Նամակներ / Գրավոր տեղեկատվության հրապարակում<br>• Հեռախոսազանգեր |

| Շահառուների խմբեր | Հետաքրքրություններ / Հարաբերություններ | Հաղորդակցման գործիքներ |
| --- | --- | --- |
| | • հետաքրքրված են Ծրագրի իրականացմամբ խթանվող բիզնեսների զարգացմամբ:<br>**Բնակավայրերի վարչական ղեկավարներ**<br>• կներգրավվեն ազդակիր բնակչության հետ անմիջականորեն աշխատանքներին՝ բնակիչներին հաղորդելով Ծրագրի նպատակները, կազմակերպելով հանրային լսումներ և տեղեկատվության հրապարակում, հավաքագրելով բնակիչների մտահոգություններն ու առաջարկությունները, մեղմելով թյուրիմացությունները և աջակցելով հողերի և ակտիվների ձեռքբերմանը (եթե այդպիսիք կան),<br>• տիրապետում են բնակչության, հողի սեփականության կարգավիճակի և տնային տնտեսությունների սոցիալ-տնտեսական պայմանների վերաբերյալ տվյալներին,<br>• ակնկալում են, որ տեղական բնակչությունը կշահի այնպիսի ծառայությունների զարգացումից, ինչպիսիք են մանրածախ առևտուրը, սննդի մատակարարումը, կացարանի տրամադրումը և ժամանակավոր զբաղվածությունը: | |
| **ԱՅԼ ՀԵՏԱՔՐՔՐՎԱԾ ԿՈՂՄԵՐ** | | |
| Հասարակական կազմակերպություններ (ՀԿ-ներ)՝ «Հայաստանի թռչուններ» ծրագիր, «Յակոբեան Բնապահպանական կենտրոն» (ACE), «Հայաստանի թռչունների պահպանման միություն», «ԲՅՀ Հայաստան», «ԷԿՈԼՈՒՐ» տեղեկատվական ցանց, «ICOMOS-Հայաստան» և այլն:<br>*ՀԿ-ների և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ցանկը կլրացվի և կհստակեցվի ՇՄՍԱԳ մշակման և Ծրագրի իրականացման ընթացքում:* | • խորհրդակցություններ որոշակի թեմաների շուրջ, ինչպիսիք են կենսաբազմազանու-թյունը, բուսական և կենդանական աշխարհը, մշակութային, այդ թվում ոչ նյութական ժառանգությունը, և այլն,<br>• հետաքրքրված են նախատեսված ծրագրի գործունեության, մարդկանց և շրջակա միջավայրի վրա դրա դրական և բացասական ազդեցության վերաբերյալ տեղեկատվությամբ:<br>ՀԿ-ների հետ սերտ համագործակցությունը թույլ կտա Ծրագրին ապահովել բնակիչների հետ ավելի սահուն հաղորդակցություն և կազմակերպել | • Սեմինարներ<br>• Հանրային հանդիպումներ և քննարկումներ<br>• Անձնական հանդիպումներ<br>• Գրավոր տեղեկատվության հրապարակում<br>• Էլ. նամակներ / նամակներ / հեռախոսազանգեր<br>• Բողոքարկման մեխանիզմ |

| Շահառուների խմբեր | Հետաքրքրություններ / Հարաբերություններ | Հաղորդակցման գործիքներ |
|---|---|---|
| | ավելի ներառական հանրային լսումներ: | |
| Ազգային, տարածաշրջանային և տեղական լրատվամիջոցներ | Համակարգված և կանոնավոր հաղորդակցությունը լրատվամիջոցների հետ կարևոր կլինի՝ ապահովելու համար, որ Ծրագրի վերաբերյալ թարմացումները ժամանակին տրամադրվեն տեղական լսարանին և վստահություն ձևավորեն, այդպիսով կանխելով հեղինակության հնարավոր ճգնաժամերը: | • Հանրային հանդիպումներ<br>• Զանգվածային լրատվամիջոցների հետ կապ / Մամուլի հաղորդագրություններ |
| Ակադեմիա (Գիտությունների Ազգային Ակադեմիա, Ճարտարապետության և Շինարարության Հայաստանի Ազգային Համալսարան, Բնական գիտությունների ինստիտուտներ և այլն): | Կարող են հետաքրքրված լինել Ծրագրի հետ կապված Բնապահպանական և սոցիալական ազդեցություններով և կարող են ներգրավվել Էկոնոմիկայի նախարարության կամ պետական մարմինների կողմից որպես խորհրդատուներ հանրային խորհրդակցությունների ընթացքում կամ փորձագիտական եզրակացություններ տրամադրելու համար: | • Հանրային հանդիպումներ<br>• Մասնավոր հանդիպումներ<br>• Գրավոր տեղեկատվության հրապարակում |
| Տեղական բիզնես | **Կարող են ներգրավվել՝**<br>• շինանյութերի մատակարարմանը,<br>• շինարարական գործունեությանը որպես ենթակապալառուներ: | • Գրավոր տեղեկատվության հրապարակում<br>• Մրցույթների և մատակարարումների հայտարարություններ: |

***Շահառուի և ազդակիր բնակավայրերի վարչական բաժանումը***

| Ջրամբար | Բնակավայր | Համայնք | Շրջան / Մարզ |
|---|---|---|---|
| Արթիկ | Նոր Կյանք, Վարդաքար, Փանիկ, Մեղրաշեն, Անուշավան, Պեմզաշեն և Տուֆաշեն | Արթիկ | Շիրակ |
| Աստղաձոր | Աստղաձոր, Զոլաքար, Վաղաշեն և Մարտունու հատվածներ | Մարտունի | Գեղարքունիք |
| Քասախ | Օշական, Ոսկեհատ և Ոսկեվազ | Աշտարակ | Արագածոտն |
| | Արտիմետ | Արաքս | Արմավիր |
| | Ֆերիք | Ֆերիք | |
| | Ակնալիճ | Մեծամոր | |
| | Էջմիածին | Վաղարշապատ | |
| | Արագած, Աղավնատուն, Ծաղկալանջ, Արշալույս, Դողս, Լերամերձ, Հայթաղ, Գեղակերտ, Հովտամեջ, Ծիածան, Ծաղկունք, Մրգաստան, Շահումյան, Խորոնք, Գրիբոյեդով, Ամբերդ և Այգեշատ: | Խոյ | |
| Լիճք | Ազարակ, Ալվանք, Կարճևան, Լեհվազ, Մեղրի, Նռնաձոր, Շվանիձոր, Վարդանիձոր և Լիճք | Մեղրի | Սյունիք |
| Ելփին | Ելփին և Չիվա | Արենի | Վայոց Ձոր |

# 6. Շահառուների Ներգրավման Ծրագիր

Շահառուների Ներգրավման Ծրագիրը (**Աղյուսակ 5**) մշակվել է շահառուների հետ արդյունավետ համագործակցությունը ապահովելու, ինչպես նաև Պատվիրատուի և շահառուների միջև հարգալից հարաբերությունները խթանելու և պահպանելու համար: Այն ներառում է Ծրագրի նախագծման (նախակառուցման) և կառուցման փուլերը:

Ծրագիրը պետք է վերանայվի և թարմացվի կառուցման փուլի մեկնարկից հետո առնվազն մեկ տարվա ընթացքում, իսկ այնուհետև՝ մինչև Ծրագրի բաղադրիչների շահագործման հանձնումը: Այն նախատեսում է կոնկրետ գործողությունների ծրագիր՝ պարտականությունների բաշխմամբ և առաջարկվող գործողությունների իրականացման ժամանակացույցով: Եթե Ծրագրի իրականացման ընթացքում լինեն փոփոխություններ, որոնք կհանգեցնեն ներգրավման մեխանիզմների փոփոխմանը և/կամ կնույնականացվեն նոր շահագրգիռ կողմեր, ապա Ծրագիրը նույնպես պետք է թարմացվի:

Շահառուների ներգրավվածությունը կշարունակվի տեղեկատվության հրապարակմանը զուգահեռ և կներառի մի քանի բաղադրիչներ՝ նպատակ ունենալով շարունակել բովանդակալից խորհրդակցությունների և Ծրագրի ու դրա ԲևՍ հետևանքների վերաբերյալ տեղեկատվության տրամադրումը:

- **Ծրագրի ՇՄՍԱԳ-ի հրապարակումը և խորհրդակցությունները:** Այս բաղադրիչը կղեկավարի Խորհրդատուն՝ Պատվիրատուի և տեղական ինքնակառավարման մարմինների աջակցությամբ: ՇՄՍԱԳ փաթեթի նախագծի հրապարակումից հետո կկազմակերպվեն հանրային խորհրդակցություններ և հանդիպումներ համապատասխան շահառուների հետ: Հանրային խորհրդակցությունների միջոցառումները նախատեսվում են.
    1) *Ծրագրի ազդակիր յուրաքանչյուր համայնքում (Արենի, Արթիկ, Մարտունի, Մեղրի, Աշտարակ և Խոյ):*
       *Օրակարգ*՝ յուրաքանչյուր ազդակիր համայնքին վերաբերվող ՇՄՍԱԳ հիմնական արդյունքների ներկայացում, մասնակիցների մտահոգությունների, մեկնաբանությունների և առաջարկությունների փաստաթղթավորում:
    2) *Երևան քաղաքում՝ համապատասխան պետական մարմինների և ՀԿ-երի մասնակցությամբ:*
       *Օրակարգ*՝ բոլոր հինգ ՇՄՍԱԳ հաշվետվությունների հիմնական արդյունքների ներկայացում մասնակից պետական մարմիններին և ՀԿ-ներին, ինչպես նաև մասնակիցների մտահոգությունների, մեկնաբանությունների և առաջարկություն-ների փաստաթղթավորում:

- **Խորհրդատվություններ տարաբնակեցման և ապրելակերպի վերականգնման պլանավորման շրջանակներում.** ՏԾ վերաբերյալ տեղեկացման վաղ խորհրդակցությունները ավարտված են (տես **Բաժին 4.2**-ը) և համայնքային իշխանությունների և հողի օտարման հետևանքով ազդակիր տնային տնտեսությունների/անձանց հետ հետագա խորհրդակցությունները կանցկացվեն ինչպես նախատեսված է յուրաքանչյուր ջրամբարի տարաբնակեցման պլանով:

- **Հատուկ նշանակության միջոցառումներ.** այս միջոցառումները տեղի կունենան կառուցման փուլից առաջ և/կամ ընթացքում, կուղղվեն ՇՄՍԱԳ պարտավորությունների կատարմանը և կներառեն առնվազն հետևյալ թեմաները.
    - Համայնքային առողջություն և անվտանգություն (ներառյալ հետիոտնային և ճանապարհային անվտանգությունը և հետիոտնային անցուղիները, հատուկ իրազեկվածության բարձրացումը դպրոցներում և այլ զգայուն խմբերում),

- Աշխատատեղերի ստեղծման հնարավորություններ և մարտահրավերներ, և կանանց աշխատուժի մասնակցությունը,
- Որոշ տեղական կառույցներ մուտքի սահմանափակում և այլընտրանքների առաջարկում:

**Աղյուսակ 5. Շահառուների Ներգրավման Ծրագիր**

| № | Գործունեություն / հաղորդակցման միջոցներ | Նպատակային խումբ | Հրապարակվող տեղեկատվություն | Ժամանակա-հատված | Պատասխանատու կողմ | Գտնվելու վայր |
|---|---|---|---|---|---|---|
| **Ծրագրի նախագծման փուլ** | | | | | | |
| 1 | Ծրագրի իրականացման առաջընթացի և դրա Բնապահպանական և Սոցիալական արդյունավետության վերաբերյալ պարբերաբար թարմացվող տեղեկության տրամադրում: | Բոլոր շահառուներ | Ծրագրի մասին ԲԱՍ տեղեկատվություն, Ծրագրի ԲԱՍ ազդեցությունների, մեղմացման և բողոքարկման մեխանիզմի վերաբերյալ հաճախակի տրվող հարցեր (ՀՏՀ), մամուլի հաղորդագրություններ, հայտարարություններ զանգվածային լրատվամիջոցներում, սոցիալական ցանցերի օգտահաշիվներ: | Ծրագրի վերաբերյալ կանոնավոր թարմացումներ՝ համաձայն կառուցման և շահագործման ժամանակացույցի, մասնավորապես, երբ հիմնական թիրախները կատարվում են / կառուցման առաջընթաց է գրանցվում և այլն: | Պատվիրատու Կառուցման կապալառու(ներ) | • ՀՀՋԿ կայք՝ հայերեն ([www.scws.am/arm](www.scws.am/arm) ) և անգլերեն ([www.scws.am/eng](www.scws.am/eng) ) լեզուներով,<br>• Հեռուստաալիքներ, զանգվածային լրատվամիջոցներ,<br>• ՀՀՋԿ սոցիալական ցանցերի էջեր (եթե ստեղծված են՝ Facebook, X, Instagram, այլ),<br>• Մարզպետարանների և ազդակիր համայնքների տեղեկատվական տախտակներ: |
| 2 | Ծրագրի բողոքարկման մեխանիզմի պահպանում: Հանրության տեղեկացում նման մեխանիզմի մասին և դրա իրականացման համար պատասխանատու անձի/անձանց կոնտակտային տվյալները: | Հնարավոր ազդակիր շահառուներ<br>Այլ շահառուներ | Ծանուցում, տեղեկատվական հայտարարություն / բողոքարկման թերթիկ: | Բողոքարկման մեխանիզմը պետք է գործի Ծրագրի ողջ կենսացիկլի ընթացքում:<br>Մեխանիզմի հետագա ներկայացում ՇՄՍԱԳ հրապարակման և հողի օտարման գործընթացի ընթացքում: | Պատվիրատու (ՀՀՋԿ-ի բողոքարկման մեխանիզմի ներդրման համար պատասխանատու): | Բողոքարկման մեխանիզմի վերաբերյալ տեղեկատվությունը տեղադրված է հետևյալ հարթակներում՝<br>• ՀՀՋԿ վեբկայք,<br>• Տեղեկատվական տախտակներ վարչական շենքերում՝<br>- Արենի համայնք և Ելփին բնակավայր,<br>- Արթիկ համայնք և Անուշավան, Արթիկ, Նոր Կյանք, Փանիկ, Պեմզաշեն և Տուֆաշեն բնակավայրեր,<br>- Մարտունի համայնք և |
| | Ստացված բողոքների և հարցումների գրառում գրանցամատյանում: | | Բողոքարկողին տրամադրված բողոքարկման լուծում: | | | |

| № | Գործունեություն / հաղորդակցման միջոցներ | Նպատակային խումբ | Հրապարակվող տեղեկատվություն | Ժամանակա-հատված | Պատասխանատու կողմ | Գտնվելու վայր |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | Աստղաձոր ու Չոլաքար բնակավայրեր,<br>- Մեղրի համայնք և Լիճք բնակավայր,<br>- Աշտարակ համայնք և Օշական, Ոսկեվազ ու Ոսկեհատ բնակավայրեր,<br>- Խոյ համայնք և Ամբերդ ու Այգեշատ բնակավայրեր,<br>• Շին. հրապարակներում ծանուցող ցուցանակներ: |
| 3 | Ծրագրի ՇՄՍԱԳ նախագծի փաթեթի 120-օրյա հրապարակում, ներառյալ՝ հինգ ՇՄՍԱԳ հաշվետվությունները, Բնապահպանական և Սոցիալական Կառավարման Պլանները (ԲՍԿՊ), Կենսաբազմազանության Գործողությունների Պլանները (ԿԳՊ), Բնապահպանական և Սոցիալական Գործողությունների Պլանը (ԲՍԳՊ), Ոչ տեխնիկական ամփոփագիրը (ՈՏԱ), Շահառուների Ներգրավման Պլանը (ՇՆՊ), Տարաբնակեցման Շրջանակը (ՏՇ): | Ազդակիր բնակավայրեր, ՀԿ-ներ, լրատվամիջոցներ, ակադեմիական շրջանակներ, այլ շահագրգիռ կողմեր: | Ծրագրի ՇՄՍԱԳ-ի նախագծի փաթեթի հրապարակում անգլերեն և հայերեն լեզուներով: | Նախնական հրապարակման ժամանակահատված՝ մայիս - սեպտեմբեր 2026 | Պատվիրատու և ՎԶԵԲ | • ՀՀԶԿ կայքէջ,<br>• ՎԶԵԲ կայքէջ,<br>• Խորհրդատուի սեփական և LinkedIn կայքեր,<br>• Բոլոր փաստաթղթերի տպագիր տարբերակները հասանելի են հետևյալ հասցեներով՝<br>- ՀՀԶԿ գրասենյակը Երևանում,<br>- Արենի, Արթիկ, Մարտունի, Մեղրի, Աշտարակ և Խոյ համայնքների վարչական շենքեր:<br>• ՈՏԱ-ի տպագիր տարբերակները հասանելի են Անուշավան, Արթիկ, Նոր Կյանք, Փանիկ, Պեմզաշեն, Տուֆաշեն, Աստղաձոր, Չոլաքար, Ամբերդ, Այգեշատ, Օշական, Ոսկեհատ, Ոսկեվազ, |

| № | Գործունեություն / հաղորդակցման միջոցներ | Նպատակային խումբ | Հրապարակվող տեղեկատվություն | Ժամանակա-հատված | Պատասխանատու կողմ | Գտնվելու վայր |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | Լիճք և Ելփին բնակավայրերի վարչական շենքերում: |
| 4 | Հայտարարություն ՇՄՍԱԳ փաթեթի նախագծի հանրային հրապարակման և խորհրդակցությունների վերաբերյալ: | Բոլոր շահառուներ | Ծրագրի, հրապարակման ժամկետի, օրակարգի, հանդիպումների ամսաթվի և ժամի վերաբերյալ համառոտ տեղեկատվություն: | Նախնականորեն նախատեսված խորհրդատվական հանդիպումներից առնվազն 15 օր առաջ (2026): | Խորհրդատու՝ Պատվիրատուի մասնակցությամբ: | • Թերթեր,<br>• ՀՀՋԿ կայքէջ,<br>• Խորհրդատուի սեփական և LinkedIn կայքեր,<br>• Տեղեկատվական տախտակներ Արենի, Արփիկ, Մարտունի, Մեղրի, Աշտարակ և Խոյ համայնքների և Անուշավան, Արփիկ, Նոր Կյանք, Փանիկ, Պեմզաշեն, Տուֆաշեն, Աստղաձոր, Զոլաքար, Ամբերդ, Այգեշատ, Օշական, Ոսկեհատ, Ոսկեվազ, Լիճք և Ելփին բնակավայրերի վարչական շենքերում,<br>• Հայտարարություններ հնարավոր ազդակիր բնակավայրերի հասանելի վայրերում: |
| 5 | ՇՄՍԱԳ փաթեթի նախագծի հանրային խորհրդակցությունների հանդիպումներ: | Ազդակիր բնակավայրեր, ցանկացած շահառու | ՇՄՍԱԳ հրապարակման փաթեթ՝ ՇՄՍԱԳ հաշվետվություն, ԲՍԿՊ, ԿՄՊ, ԲՍԳՊ, ՈՏԱ, ՏԾ | Մայիս -Սեպտեմբեր 2026 | Խորհրդատու և ՀՀՋԿ ՝ տեղական իշխանությունների աջակցությամբ | Վարչական շենքեր՝<br>• Արենի համայնք,<br>• Արփիկ համայնք,<br>• Մարտունի համայնք,<br>• Մեղրի համայնք,<br>• Աշտարակ համայնք,<br>• Խոյ համայնք: |
| | | Պետական մարմիններ, ՀԿ- | | | | Համաժողովների դահլիճ Երևանում |

| № | Գործունեություն / հաղորդակցման միջոցներ | Նպատակային խումբ | Հրապարակվող տեղեկատվություն | Ժամանակա-հատված | Պատասխանատու կողմ | Գտնվելու վայր |
|---|---|---|---|---|---|---|
| | | ներ, լրատվամիջոցներ, ակադեմիական շրջանակներ և ցանկացած շահառու | | | | |
| 6 | ՇՄՍԱԳ հրապարակման ժամանակահատվածում և հանրային խորհրդակցությունների ընթացքում ստացված մեկնաբանությունների, առաջարկությունների և այլ արձագանքների վերլուծություն | Բոլոր շահառուներ | Հանրային խորհրդակցության հաշվետվություն, որը արտացոլում է շահառուների կարծիքը և առաջարկվող գործողությունները (օրինակ՝ ՇՄՍԱԳ հրապարակման փաթեթի փաստաթղթերի վերանայումներ): | Սեպտեմբեր - Հոկտեմբեր 2026 | Խորհրդատու՝ ՀՀՋԿ-ի աջակցությամբ | • ՀՀՋԿ կայքէջ |
| 7 | Անհրաժեշտության դեպքում նպատակային խորհրդատվությունների անցկացում | Ազդակիր շահառուներ, որոնք բարձրացրել են խնդիրներ, նոր բացահայտված շահառուներ | Տեղեկատվական տեղեկագրեր, ՀՏՀ ամփոփագրեր Ծրագրի ԲԱՍ ազդեցությունների, մեղմացնող միջոցառումների և այլնի վերաբերյալ: | Մայիս - Սեպտեմբեր 2026 | Խորհրդատու և ՀՀՋԿ՝ տեղական իշխանությունների աջակցությամբ | Ծրագրի իրականացման տարածքում ազդակիր բնակավայրեր / վարչական միավորներ: |
| 8 | Նախագծի իրականացման, դրա ԲԱՍ ազդեցության, օգուտների և այլնի վերաբերյալ նախատեսված գործունեության լրատվամիջոցների լուսաբանում: | Բոլոր շահառուներ | Հայտարարություններ զանգվածային լրատվամիջոցներում, մամուլի հաղորդագրություններ | Մայիս - Սեպտեմբեր 2026 | Խորհրդատու և ՀՀՋԿ՝ տեղական իշխանությունների աջակցությամբ | • ՀՀՋԿ կայքէջ<br>• Համապատասխան լրատվամիջոցներ / միջոցներ: |

| № | Գործունեություն / հաղորդակցման միջոցներ | Նպատակային խումբ | Հրապարակվող տեղեկատվություն | Ժամանակա-հատված | Պատասխանատու կողմ | Գտնվելու վայր |
|---|---|---|---|---|---|---|
| 9 | Պաշտոնական նամակագրություն, հանդիպումներ, հողի օտարման ընթացակարգերի վերաբերյալ համագործակցություն և այլն: | Պետական մարմիններ, մարզ-պետարաններ, ազդակիր համայնքներ և այլն: | Հատուկ տպագիր կամ էլեկտրոնային նյութերի պատրաստում | Նախագծման ընթացքում և Ծրագրի իրականացման ողջ ընթացքում, երբ դա նպատակահարմար է | ՀՀՋԿ՝ Խորհրդատուի աջակցությամբ | • Պետական մարմինների գրասենյակներ, ՀՀՋԿ կամ այլ համաձայնեցված վայր: |
| **Նախակառուցման փուլ** | | | | | | |
| 10 | Վերջնական ՇՄՍԱԳ փաթեթի հրապարակում՝ ՇՄՍԱԳ հաշվետվություններ, ԲՍԿՊ-եր, ԿԳՊ-եր, ԲՍԳՊ, ՇՆՊ, ՈՏԱ և ՏԾ | Բոլոր շահառուներ | Վերջնական ՇՄՍԱԳ փաթեթ՝ ՇՄՍԱԳ հաշվետվություններ, ԲՍԿՊ-եր, ԿԳՊ-եր, ԲՍԳՊ, ՇՆՊ, ՈՏԱ և ՏԾ | Հոկտեմբեր 2026, այնուհետև ՇՄՍԱԳ փաթեթը կպահպանվի հրապարակված Ծրագրի կենսացիկլի ընթացքում: | ՀՀՋԿ | • ՀՀՋԿ կայքէջ<br>• ՎԶԵԲ կայքէջ |
| 11 | Խորհրդատվություն Տարաբնակեցման Պլանների (ՏՊ) մշակման ընթացքում | Ազդեցության ենթարկված Անձինք (ԱԵԱ)/ տնային տնտեսություններ | Նախնական ՏՊ-ներ և ամփոփագրեր (հայերեն և անգլերեն լեզուներով) | Մայիս - Սեպտեմբեր 2026 | ՀՀՋԿ | • ՀՀՋԿ կայքէջ<br>• Համապատասխան ՏՊ-երի նախագծերի թղթային տարբերակները (հայերենով) հետևյալ վարչական շենքերում՝<br>- Արենի համայնք,<br>- Արթիկ համայնք,<br>- Մարտունի համայնք,<br>- Մեղրի համայնք,<br>- Աշտարակ համայնք,<br>- Խոյ համայնք,<br>- կամ ազդակիր բնակավայրերում: |
| | ՏՊ հրապարակում | | | Երբ ՏՊ-ի նախագծերը մշակված կլինեն | | |
| 12 | Կառուցման աշխատանքների մեկնարկի և ավարտի մասին | Ազդակիր համայնքներ և բնակավայրեր: | Հայտարարություններ զանգվածային լրատվամիջոցներում, | Կառուցման աշխատանքների մեկնարկից առաջ և | ՀՀՋԿ, մարզպետարաններ, ազդակիր | • ՀՀՋԿ կայքէջ<br>• Ազդակիր համայնքների կայքեր, |

| № | Գործունեություն / հաղորդակցման միջոցներ | Նպատակային խումբ | Հրապարակվող տեղեկատվություն | Ժամանակա-հատված | Պատասխանատու կողմ | Գտնվելու վայր |
|---|---|---|---|---|---|---|
| | ծանուցում: | | մամուլի հաղորդագրու-թյուններում, սոցիալական ցանցերում: | կառուցման ընթացքում պարբերաբար թարմացումներ: | համայնքներ և բնակավայրեր | • Հայտարարություններ մասնակից մարզպետարանների, ազդակիր համայնքների և բնակավայրերի տեղեկատվական տախտակներին[13]: |
| 13 | Հատուկ նշանակության միջոցառումներ, օրինակ՝ <br>• Հանրությանը տեղեկացնել կառուցման ընթացքում երթևեկության հնարավոր աճի և կիրառվող համապատասխան անվտանգության միջոցառումների մասին, <br>• Նախատեսվող շինհրապարակներին մոտ գտնվող դպրոցներում հանդիպումների անցկացում՝ շինհրապարակներից և գործունեությունից առաջացող հնարավոր ռիսկերի և վտանգների վերաբերյալ, <br>• Հանրությանը տեղեկացնել համայնքի առողջության և անվտանգության | Ազդակիր համայնքներ և բնակավայրեր, առանձին հանդիպումներ են անցկացնում կանանց հետ: | Հայտարարություններ, տեղեկագրեր, մամուլի հաղորդագրություններ, տեսացուցադրման նյութեր, անվտանգության կանոններ և կարգավորումներ: | Կառուցման աշխատանքների մեկնարկից առաջ և անհրաժեշտության դեպքում կառուցման ընթացքում: | ՀՀՋԿ, տեղական համայնքներ և կառուցման կապալառու | • ՀՀՋԿ կայքէջ, <br>• Ազդակիր համայնքների կայքեր, <br>• Հայտարարություններ մասնակից մարզպետարանների, ազդակիր համայնքների և բնակավայրերի տեղեկատվական տախտակներին, <br>• Հանդիպումներ դպրոցներում կամ նախատեսված շինհրապարակներին մոտ գտնվող ազդակիր բնակավայրում, որտեղ դա նպատակահարմար է: |

[13] Արենի համայնքը և դրա Ելփին բնակավայրը; Արթիկ համայնքը և դրա Անուշավան, Արթիկ, Նոր Կյանք, Փանիկ, Պեմզաշեն և Տուֆաշեն բնակավայրերը; Սարտունի համայնքը և դրա Աստղաձոր և Զոլաքար բնակավայրերը; Մեղրի համայնքը և դրա Լիճք բնակավայրը; Աշտարակ համայնքը և դրա Օշական, Ոսկեվազ և Ոսկեհատ բնակավայրերը; Խոյ համայնքը և դրա Ամբերդ և Այգեշատ բնակավայրերը:

| № | Գործունեություն / հաղորդակցման միջոցներ | Նպատակային խումբ | Հրապարակվող տեղեկատվություն | Ժամանակա-հատված | Պատասխանատու կողմ | Գտնվելու վայր |
|---|---|---|---|---|---|---|
| | կանխարգելիչ միջոցառումների մասին: | | | | | |
| 14 | Հատուկ նշանակության միջոցառումներ, օրինակ՝<br>• Հանրությանը տեղեկացնել կառուցման ընթացքում երթևեկության հնարավոր աճի և կիրառվող համապատասխան անվտանգության միջոցառումների մասին,<br>• Նախատեսվող շինհրապարակներին մոտ գտնվող դպրոցներում հանդիպումների անցկացում՝ շինհրապարակներից և գործունեությունից առաջացող հնարավոր ռիսկերի և վտանգների վերաբերյալ,<br>• Հանրությանը տեղեկացնել համայնքի առողջության և անվտանգության նախազգուշական միջոցառումների մասին: | Ազդակիր բնակավայրեր ու համայնքներ, առանձին հանդիպումներ կանանց հետ: | Հայտարարություններ, տեղեկագրեր, մամուլի հաղորդագրություններ, տեսացուցադրման նյութեր, անվտանգության կանոններ և կարգավորումներ: | Կառուցման աշխատանքների մեկնարկից առաջ և անհրաժեշտության դեպքում կառուցման ընթացքում: | ՀՀՋԿ և կառուցման կապալառու | Որոշումը կկայացվի ջրամբարների նախագծման և կառուցման ժամանակացույցի, ընտրված աշխատողների տեղավորման ռազմավարության, ջրամբարի շահագործման և սպասարկման պլանների, բնակավայրերի վրա սահմանափակումների/այլ ազդեցությունների և նրանց կողմից բարձրացված հետաքրքրությունների/ կարիքների հիման վրա: |
| 15 | Շինարարական հրապարակներում և համապատասխան բնակավայրերում տեղեկատվական ցուցանակների տեղադրում՝ | Ազդակիր բնակավայրեր: | Տեղեկատվական տախտակներ, բողոքարկման մեխանիզմ և բողոքարկման ձևաթղթեր: | Կառուցման աշխատանքների մեկնարկից առաջ: | ՀՀՋԿ և կառուցման կապալառու | • Շինարարական հրապարակներ,<br>• Ազդակիր համայնքների և բնակավայրերի վարչական |

| № | Գործունեություն / հաղորդակցման միջոցներ | Նպատակային խումբ | Հրապարակվող տեղեկատվություն | Ժամանակա-հատված | Պատասխանատու կողմ | Գտնվելու վայր |
|---|---|---|---|---|---|---|
| | բողոքարկման մեխանիզմի ներդրման համար պատասխանատու անձի կոնտակտային տվյալներով, և հանրային բողոքարկման ձևաթղթերով արկղերի տեղադրմամբ: | | | | | շենքեր[14]: |
| 16 | ՀՏՀ պատրաստում և հրապարակում, որոնք ուրվագծում են՝ <br>• Ծրագրի ամփոփումը, <br>• ԲևՍ ազդեցությունները, ռիսկերը և հնարավորությունները, <br>• արդեն ընդունված/ իրականացվող մեղմացնող միջոցառումները, <br>• շահառուների ներգրավման միջոցառումների ընթացքում տրված այլ հարցերը: | Ազդակիր բնակավայրեր, այլ շահառուներ: | Տեղեկատվական ամփոփագրեր: | Կառուցման աշխատանքների մեկնարկից առաջ: | ՀՀՋԿ | • Շինարարական հրապարակներ, <br>• Ազդակիր համայնքների և բնակավայրերի վարչական շենքեր[15]: |
| **Կառուցման փուլ** | | | | | | |
| 17 | Ֆոկուս խմբերի/անհատական հանդիպումների և խորհրդակցությունների կազմակերպում, երբ որևէ | Ազդակիր կողմեր, խնդիրներ բարձրացնող ցանկացած շահառու կամ նոր | Պատրաստել հատուկ տպագիր կամ էլեկտրոնային նյութեր: | Ծրագրի ողջ կենսացիկլում, երբ որ կիրառելի է: | ՀՀՋԿ, տեղական համայնքներ և բնակավայրեր: | • ՀՀՋԿ Երևանյան գրասենյակ, կամ <br>• Ազդակիր բնակավայրերում՝ կախված կազմակերպչից և բարձրացված հարցերի |

[14]Նույնը
[15]Նույնը

| № | Գործունեություն / հաղորդակցման միջոցներ | Նպատակային խումբ | Հրապարակվող տեղեկատվություն | Ժամանակա-հատված | Պատասխանատու կողմ | Գտնվելու վայր |
|---|---|---|---|---|---|---|
| | կոնկրետ թեմա մտահոգիչ է թվում կամ անհասկանալի: | հայտնաբերված շահառու, եթե կիրառելի է: | | | | տեսակներից,<br>• Հեռախոսազանգերի կամ էլեկտրոնային նամակների փոխանակում: |
| 18 | ՇՆՊ-ի թարմացում՝ հիմնվելով մշտադիտարկման և գնահատման արդյունքների վրա և հրապարակում: | Բոլոր շահառուները | Թարմացված ՇՆՊ | Կանոնավոր կերպով Ծրագրի ողջ կենսացիկլում: | ՀՀՋԿ, ՇՆՊ-ի սպասարկման համար պատասխանատու անձ: | • ՀՀՋԿ կայքէջ,<br>• Թղթային տարբերակ՝ ՀՀՋԿ Երևանյան գրասենյակում: |
| 19 | Ծրագրի առաջընթացի և ԲՍԳՊ իրականացման կարգավիճակի վերաբերյալ տարեկան ԲևՍ մշտադիտարկման հաշվետվությունների մշակում[16] | ՎԶԵԲ | Հաշվետվություն՝ համաձայն ՎԶԵԲ-ի հետ համաձայնեցված ձևաչափի | Տարեկան՝ Ծրագրի ողջ կենսացիկլում (նախնականորեն յուրաքանչյուր տարի մայիսի 1-ին) | ՀՀՋԿ / ԾԻԳ | • ՎԶԵԲ-ի և ՀՀՋԿ կայքեր |
| 20 | ԲևՍ արդյունավետության վերաբերյալ տարեկան հաշվետվությունների մշակում | Բոլոր շահառուներ | Կարճ ամփոփ հաշվետվություն | Տարեկան (հաշված կառուցման սկզբից), Ծրագրի ողջ կենսացիկլում | ՀՀՋԿ / ԾԻԳ | • ՀՀՋԿ կայքէջ,<br>• Ազդակիր համայնքների կայքեր,<br>• Թղթային տարբերակ՝ ՀՀՋԿ Երևանյան գրասենյակ,<br>• Թղթային տարբերակ՝ ազդակիր համայնքների վարչական շենքերում,<br>• Ծրագրի գրասենյակներ: |
| | **Նախագծի գործողություններ** | | | | | |
| 21 | Ծրագրի շահագործման ընթացքում կիրառել 1, 2, 8, 13, 14, 16, 17, 18, 19 և 20 կետերը: Վերականգնողական աշխատանքների դեպքում վերագործարկել «Նախակառուցման փուլ» և «Կառուցման փուլ» համապատասխան կետերը: | | | | | |

[16] Կարող է արագացվել ՎԶԵԲ-ի հարցման հիման վրա

# 7. Բողոքարկման Մեխանիզմ

Համաձայն ՎԶԵԲ ԻՊ1 և ԻՊ10 պահանջների, Պատվիրատուն պետք է ստեղծի արդյունավետ Բողոքարկման Մեխանիզմ (ԲՄ) Ծրագրի հնարավորինս վաղ փուլում՝ տեղյակ լինելու և արձագանքելու շահագրգիռ կողմերի մտահոգություններին կապված Ծրագրի, մասնավորապես, դրա ԲևՍ ցուցանիշների հետ, արդյունավետ, ժամանակին, թափանցիկ, արդարացի և ծախսարդյունավետ եղանակով:

Ծրագրի բողոքարկման մեխանիզմը հիմված է ՀՀՋԿ-ի առկա հաղորդակցման ուղիների և ազգային իրավական ակտերի ու կանոնակարգերի վրա, որը լրացվել է ՎԶԵԲ-ի պահանջներին համապատասխանելու լրացուցիչ միջոցառումներով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին»[17] ՀՀ օրենքը սահմանում է վարչական վարույթի առավելագույն ժամկետը՝ 30 օր: Օրենքով կարող են սահմանվել հատուկ ժամկետներ՝ 30 օրից կարճ կամ երկար: Օրենքի համաձայն՝ վարչական մարմին ուղղված դիմումները ներկայացվում են գրավոր և պետք է պարունակեն դիմողի (ֆիզիկական կամ իրավաբանական անձ) լրիվ անվանումը, հասցեն, դիմումը ներկայացվող վարչական մարմնի անվանումը և այլն:

Ծրագրի ԲՄ-ը հաշվի է առնում ազգային կանոնակարգերի պահանջները, ինչպես նաև բողոքարկումների կառավարման այն գործելակերպը, որը ներկայումս կիրառվում է Հայաստանում ՎԶԵԲ-ի կողմից ֆինանսավորվող այլ ծրագրերում: ՀՀՋԿ-ի նախագահին ուղղված բոլոր հարցումները և բողոքները կհավաքագրվեն և կգրանցվեն ընդհանուր տվյալների բազայում, որից հետո կբաշխվեն համապատասխան ստորաբաժանումներին կամ բաժիններին՝ վերլուծման և արձագանքման համար: Այլ վարկային ծրագրերի շրջանակներում ստացված հարցումները և բողոքները ՀՀՋԿ-ի ղեկավար անձնակազմի և մասնագետների կողմից նույնպես կգրանցվեն ընդհանուր տվյալների բազայում: Գրանցումից հետո որոշումը և/կամ պատասխանը կտրամադրվի հարցնողին կամ բողոքարկողին՝ նշված նախընտրելի միջոցով, ստացումից հետո մեկ ամսվա ընթացքում: Հետագա վերանայման կամ ստուգման կարիք չունեցող հարցումների և բողոքների համար պատասխանը կտրամադրվի 15 օրվա ընթացքում:

Դժգոհություններն ու առաջարկությունները կարող եք ուղղել ՀՀՋԿ-ին՝ օգտագործելով ստորև նշված կոնտակտային տվյալները:

| **Ծրագրին վերաբերող հարցումների և բողոքների համար ՋԿ կոնտակտային անձ** | |
|---|---|
| **Անուն՝** | Նաիրա Ավետյան |
| **Պաշտոն՝** | Ոռոգման և կոլեկտորային-դրենաժային համակարգերի բաժնի գլխավոր մասնագետ |
| **Հասցե՝** | ՀՀ, Երևան 0010, Վարդանանց փող. 13ա |
| **Էլ. փոստ՝** | nairavetyan2013@gmail.com |
| **Հեռախոս՝** | +37410 540135, +37491 726111 |

| **ՋԿ տվյալները՝ ընդհանուր հարցումների համար** | |
|---|---|
| **Հասցե՝** | ՀՀ, Երևան 0010, Վարդանանց փող. 13ա |
| **Թեժ գիծ՝** | +37410 547283, +37410 540135 |
| **Ընդունարան՝** | +37410 540909 |
| **Ֆաքս՝** | +37410 540613 |
| **Էլ. փոստ՝** | scws@scws.am |

[17] https://www.arlis.am/hy/acts/194274

Ազդակիր բնակավայրերի բնակիչները կարող են իրենց հարցումներն ու բողոքները ներկայացնել նաև համայնքների և համապատասխան բնակավայրերի ղեկավարներին.

**1) Արթիկի ջրամբարի համար՝**

Արթիկ համայնքի ղեկավարին և Անուշավան, Արթիկ, Նոր Կյանք, Փանիկ, Պեմզաշեն և Տուֆաշեն բնակավայրերի վարչական ղեկավարներին,

**2) Ելփինի ջրամբարի համար՝**

Արենի համայնքի ղեկավարին և Ելփին բնակավայրի վարչական ղեկավարին,

**3) Աստղաձորի ջրամբարի համար՝**

Մարտունի համայնքի ղեկավարին և Աստղաձոր և Զոլաքար բնակավայրերի վարչական ղեկավարներին,

**4) Լիճքի ջրամբարի համար՝**

Մեղրի համայնքի ղեկավարին և Լիճք բնակավայրի վարչական ղեկավարին,

**5) Քասախի ջրամբարի համար՝**

Աշտարակ համայնքի ղեկավարին և Օշական, Ոսկեվազ և Ոսկեհատ բնակավայրերի վարչական ղեկավարներին,

Խոյ համայնքի ղեկավարին և Ամբերդ և Այգեշատ բնակավայրերի վարչական ղեկավարներին:

Տեղական իշխանություններին (բնակավայրերի կամ համայնքների ղեկավարներին) ուղղված ցանկացած հարցում կամ մտահոգություն անմիջապես կփոխանցվի ՀՀՋԿ-ին՝ դիտարկման և լուծման համար:

Կառուցման կապալառուի և վերահսկող ինժեների նշանակումից հետո նրանց կոնտակտային տվյալները կիրապարակվեն, որպեսզի հարցումներն ու բողոքները կարողանան ուղղվել նաև իրենց: Բողոքների վերաբերյալ տեղեկատվությունը վերահսկող ինժեները ամսական կտրվածքով կներկայացնի ՀՀՋԿ-ին, որը նաև կներառի Կառուցման կապալառուից ստացված համապատասխան տվյալները:

Ծրագրի շինարարությունից առաջ ՀՀՋԿ-ը կնշանակի շահառուների ներգրավման մասնագետ, որը կվերահսկի սույն ՇՆՊ-ի իրականացումը, ներառյալ Ծրագրի վերաբերյալ բողոքների և հարցումների ընդունումը և գրանցումը: Կառուցման կապալառուն շին.հրապարակում կներգրավի համայնքների հետ կապի պատասխանատուների (ՀԿՊ)՝ ՇՆՊ-ի իրականացումը հեշտացնելու համար[18]:

Ծրագրի համար առաջարկվող բողոքարկման մեխանիզմը ներկայացված է **Նկար 7**-ում պատկերված սխամայում:

Հողերի օտարման գործընթացի մեկնարկի հետ մեկտեղ, բողոքներն ու առաջարկները կարող են գրավոր ներկայացվել ՀՀՋԿ-ին՝ օգտագործելով հանրային բողոքարկման ձևանմուշը (**Հավելված 1**): Այն հասանելի կլինի Էլեկտրոնային ձևաչափով՝ ՀՀՋԿ-ի կայքում, իսկ տպագիր տարբերակով՝ ազդակիր համայնքների և բնակավայրերի վարչական շենքերում, ինչպես նաև Ծրագրի շինհրապարակներում:

Հեռախոսով, Էլեկտրոնային փոստով, փոստով, կարճ հաղորդագրություններով (SMS) կամ սոցիալական հարթակներով ստացված բողոքները նույնպես կգրանցվեն և կքննարկվեն:

ՀՀԳԿ-ն նպատակ ունի պաշտպանել անձի գաղտնիությունը, երբ դա պահանջվում է, և կապահովի անանունությունը:

[18] Կարող է լինել ՀՀՋԿ-ի կամ ԾԻԳ-ի անձնակազմի անդամ: Նա սերտորեն կհամագործակցի կառուցման կապալառուի հետ և հաշվետու լինի ՀՀՋԿ-ին կամ ԾԻԳ-ին:

**Նկար 7.** **Ծրագրի բողոքարկման մեխանիզմի սխեման**




*Աղբյուր՝ մշակված է ATMS Solutions և Ecoline International ընկերությունների կողմից*

Բողոքները կարող են ներկայացվել նաև անանուն: Եթե բողոքարկողը նախընտրում է բողոքը ներկայացնել անանուն կամ երրորդ կողմի միջոցով, դա կընդունվի, և ՀՀՋԿ-ն հնարավորինս կարծագանքի (օրինակ՝ իր կայքում ընդհանուր հայտարարությունների կամ համայնքային վարչական շենքերի հայտարարությունների տախտակների միջոցով՝ հարգելով հարցնողի գաղտնիությունը):

Գենդերային Հիմքով Բռնություն և Ոտնձգություն (ԳՀԲՈ) վերաբերյալ բողոքները կարող են ներկայացվել պաշտպանված և գաղտնի տեղեկատվական ուղիներով, այդ թվում՝ անանուն: Բողոք ներկայացնողները պարտավոր չեն բացահայտել իրենց ինքնությունը: Միայն ԳՀԲՈ հարցերում փորձառու, գաղտնիության և զգայուն տեղեկատվության էթիկական նորմերը գիտակցող մասնագետները կդիտարկեն և կկառավարեն նման բողոքները ՀՀՋԿ-ում: Բողոքարկողները և վկաները կպաշտպանվեն ցանկացած տեսակի վրեժխնդրությունից կամ անբարենպաստ հետևանքներից: ԳՀԲՈ-ին վերաբերող բողոքները կգրանցվեն և կպահվեն համակարգում պաշտպանված և սահմանափակ մուտքի թույլտվությամբ, Ծրագրի մյուս բողոքներից առանձին: Ծրագիրը կապահովի արագ արձագանքման ժամանակացույցեր, որոնք համապատասխանում են ԳՀԲՈ-ի կոնկրետ դեպքերին՝ միաժամանակ ապահովելով խոհեմություն և նվազագույնի հասցնելով գործընթացում ներգրավված անձանց թիվը:

ՀՀՋԿ-ն կստեղծի և կպահպանի առանձին բողոքների գրանցամատյան Ծրագրի համար: Այն կպարունակի Ծրագրին վերաբերող բոլոր բողոքները դրա ողջ կենսացիկլի ընթացքում: Գրանցամատյանում կգրանցվեն հետևյալ տեղեկությունները՝

- Ստացված բողոքի/առաջարկի/բողոքարկման առարկան,
- Դիմումի ամսաթիվը,
- Ներկայացնողի կոնտակտային տվյալները (եթե բողոքը անանուն չի ներկայացվել),
- Ձեռնարկված գործողությունների նկարագրությունը (վերլուծություն, քննություն, ուղղիչ գործողություն, կանխարգելիչ գործողություն և այլն),
- Որոշման կայացման և գործի ավարտի / պատասխան տրամադրելու ամսաթիվը,
- Ընդունված որոշման վերաբերյալ ներկայացնողի համաձայնության / անհամաձայնության և ձեռնարկված միջոցառումների մանրամասները:

## 8. Մշտադիտարկում, Գնահատում և Հաշվետվողականություն

Շահառուների հաջող ներգրավումը կախված է շարունակական ջանքերից, ցուցանիշների մշտադիտարկումից և գնահատումից, ինչպես նաև փոփոխված պայմաններին և շահառուների տեղեկատվական կարիքներին համապատասխանեցնելուց:

ՇՆՊ-ի իրականացման և մշտադիտարկման ընդհանուր պատասխանատվությունը կրում է ՀՀՋԿ սոցիալական փորձագետ՝ Մարինե Վարդանյանը (կոնտակտային տվյալները ներկայացված են ստորև): ՇՆՊ-ի և դրան առնչվող հանրային իրապարակումների հարցերում նրան կաջակցի ՀԿՄ-ն՝ Ջրային կոմիտեի ոռոգման և կոլեկտորային-դրենաժային համակարգերի բաժնի գլխավոր մասնագետը, ով հանդիսանում է Ծրագրին առնչվող հարցումների և բողոքների կոնտակտային անձ, ինչպես նաև ՀՀՋԿ-ի (կամ ԾԻԳ-ի) մշտադիտարկման և հաշվետվությունների համար պատասխանատուն: Այս մասնագետը պատասխանատու կլինի ՎԶԵԲ-ի համար Ծրագրին վերաբերող պարբերական ԲևՍ հաշվետվություններ մշակելու համար:

| **ՇՆՊ-ի իրականացում և մշտադիտարկում** | |
|---|---|
| **Անուն՝** | Մարինե Վարդանյան |
| **Պաշտոն՝** | Սոցիալական փորձագետ |
| **Հասցե՝** | ՀՀ, Երևան 0010, Վարդանանց փող. 13ա |
| **Էլ. հասցե՝** | eshswatcom@gmail.com |
| **Հեռախոսահամար՝** | +37410 540135 |

Հետևյալ ցուցանիշները կօգտագործվեն շահառուների ներգրավման արդյունավետությունը մշտադիտարկելու և բարելավելու համար՝ Ծրագրի իրականացմանը աջակցելու նպատակով՝

- ՇՆՊ-ը թարմացված է և հասանելի է հանրությանը վերանայման/մեկնաբանության համար,
- ՇՆՊ-ում թվարկված գործողությունները կատարվել են ամբողջությամբ և ըստ նախատեսվածի,
- Հանրային խորհրդակցությունների ընթացքում քննարկված թեմաները և բարձրացված հարցերը, ինչպես նաև հետագա գործողությունները, եթե դրանք իրականացվել են,
- Հետադարձ կապի տարբեր միջոցներով ստացված շահագրգիռ կողմերի մեկնաբանությունների և առաջարկությունների քանակը՝ նշելով, եթե հնարավոր է, թե քանի կին և տղամարդ է ուղարկել դրանք, և հետագա գործողությունները, եթե դրանք իրականացվել են,
- Ստացված շահագրգիռ կողմերի բողոքների և պահանջների քանակը՝ ըստ սեռի, եթե հնարավոր է,
- Ծրագրի իրականացման գործընթացի վերաբերյալ տեղական, տարածաշրջանային և ազգային լրատվամիջոցներում հրապարակումների քանակը,
- ՀՀՋԿ-ի կամ դրա կապալառուների կողմից ստացված բողոքների հիմնական կատեգորիաները (զբաղվածություն, մշտական կամ ժամանակավոր հողօգտագործում, բնապահպանական հարցեր, աշխատանքային հարաբերություններ և այլն),
- Սահմանված առավելագույն ժամկետում լուծված բողոքների քանակը,
- Առանց հանգուցալուծման մնացած բողոքների քանակը:

Բոլոր շահառուների ներգրավման գործողությունները կգրանցվեն հատուկ գրանցամատյանում (**Հավելված 2**): Նման գրանցամատյանը ստեղծվել է ՇՄՍԱԳ գործընթացի սկզբում և կպահպանվի Ծրագրի իրականացմանը զուգընթաց:

ՇՆՊ-ը պարբերաբար կվերլուծվի ՀՀՋԿ-ի կողմից՝ բացահայտելու համար այն գործողությունները, որոնք կարող են պահանջել ուղղիչ և/կամ կանխարգելիչ միջոցառումներ՝ դրանց արդյունավետությունը բարելավելու նպատակով: Նման դեպքերում ՇՆՊ-ը պետք է թարմացվի և հանրությանը տրամադրվի համապատասխան փոփոխություններով:

Եթե Ծրագրում տեղի ունենան էական փոփոխություններ, որոնք կհանգեցնեն լրացուցիչ կամ տարբեր բնապահպանական և սոցիալական ռիսկերի և ազդեցությունների Ծրագրի ազդակիր կողմերի վրա, ՀՀՋԿ-ն կանցկացնի լրացուցիչ խորհրդակցություններ այն մասին, թե ինչպես են այդ ռիսկերն ու ազդեցությունները մեղմվելու:

Շահառուների ներգրավման գործընթացի արդյունքները կվերլուծվեն ամսական և եռամսյակային կտրվածքով, և վերլուծության ամփոփումը կներառվի ՎԶԵԲ-ին կառուցման և շահագործման առաջին հինգ տարիների ընթացքում ներկայացվող տարեկան ԲԱՍ մշտադիտարկման հաշվետվություններում: Բոլոր ԲԱՍ մշտադիտարկման հաշվետվությունները կտեղադրվեն ՀՀՋԿ-ի և ՎԶԵԲ-ի կայքերում:

# Հավելված 1 - Հանրային բողոքի ձևանմուշ

**Հանրային բողոքի ձևանմուշ**

№ (ներքին օգտագործման համար)

| | |
|---|---|
| Անվանումը | Անուն ______________________________ |
| | Ազգանուն ______________________________ |
| | ☐ Ես ցանկանում եմ ներկայացնել իմ բողոքը անանուն |
| | ☐ Ես խնդրում եմ առանց իմ համաձայնության չբացահայտել իմ ինքնությունը և կոնտակտային տվյալները |
| Կոնտակտային տվյալներ | ☐ Փոստով: Խնդրում ենք տրամադրել փոստային հասցե |
| Խնդրում ենք նշել, թե ինչպես եք ցանկանում կապվել ձեզ հետ (փոստ, հեռախոս, էլ-նամակ) | ______________________________ |
| | ☐ Հեռախոսով ______________________________ |
| | ☐ Էլ. նամակով ______________________________ |
| Հաղորդակցման համար նախընտրելի լեզու | ☐ Հայերեն<br>☐ Ռուսերեն<br>☐ Այլ, խնդրում ենք նշել ______________ |
| Բողոքի նկարագրություն | ______________________________ |
| Միջադեպի / բողոքի ամսաթիվը | ☐ Մեկ անգամ կատարված միջադեպ/բողոք (ամսաթիվ _______) |
| | ☐ Տեղի է ունեցել մեկից ավելի անգամ (քանի անգամ) |
| | ☐ Ընթացիկ (ներկայումս խնդիր է առաջացնում) |
| Ի՞նչպես կցանկանաք տեսնել խնդիրի լուծումը | ______________________________ |
| Ստորագրություն: | ______________________________ |
| Ամսաթիվ | ______________________________ |

# Հավելված 2 - Շահառուների ներգրավվածության գրանցամատյանի ձևանմուշ

*Ծանուցում՝ գրանցամատյանը կարող է վարվել Excel ֆորմատով:*

| ID/№ | Ներգրավման գործունեություն | Մասնակիցներ | Շահառուների կատեգորիա | Ամսաթիվ | Վայր | Նախաձեռնող | Մասնակիցների թիվ (կին / տղամարդ) | Ներգրավման նպատակ | Քննարկված հարցեր և համաձայնեցված գործողություններ | Հարդիպման արձանագրության հղում |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | | | | | | | | | | |
| 2 | | | | | | | | | | |
| 3 | | | | | | | | | | |
| … | | | | | | | | | | |